



ՄԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԲԱՅՅԻ ԵՒ ՀԱՅ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆԱ. Ա.
ԱՍՏՂԱԲԱՇԽԱԿԱՆ. ԵՐԿՐԱԳՆՈՒՍ Պատմութիւնը (Քամիլ Ֆլամարիօն)
.....Թարգմանութիւն
ՊԱՏՄԱԿԱՆ. Զինացիք նկարագրեալ յինքեանց (Չէնկ—Քի—Թօնկ)
.....Թարգմանութիւն
ԲԱՆԱՍՏԵՂՄԱԿԱՆ. Անկումն Տերեւոց. (Միլլուա)
ՎԷՊ. Մատենի մեղքը (ԲՕԼ ԱԼՊԱՆ) Թարգմանութիւն
ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ. (Կզապիէ աը Մօնթերէն)
ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ. Գրեւոր նոր եղանակ մը. (Պատկերազարդ)
ՔԱՂՈՒԱԾ ՄԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ. Արտաքին, Ներքին, Ազգային :

ՊԱՅՄԱՆ Ք ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ ԵՆ ԳԱԼԱՈՆԵՐՈՒ — տարեկան Կէս ոսկի Օսման .
» » վեցամսեայ Բառ » »
ՄԷԿ ԹԵՐԹԻՆ ԳԼԻՆ Է 60 փարայ
Օտար քաղաքաց համար տարեկան 12 Ֆրանք
» » վեցամսեայ 6 »
ԹՊԹԱՏԱՐՈՒԹԵԱՆ Ծախք տարեկան Դաճար՝ 18
վեցամսեայ » » 7 1/2

Մասիսի խմբագրութեան ուղղեալ ո՛ր եւ է գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Արեւիք և Մասիս Լրագրաց
Ղալաթիա, Նորատուրկեան խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ



RECEIVED

1891

RECEIVED

RECEIVED

RECEIVED

RECEIVED

RECEIVED

RECEIVED

1891

ԴՐԱՄԱՆԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 6 Սեպտեմբեր

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

3 ամիս Լոնտրայի վրայ (պանդայի)	110 1/8
3 » » » (վճռակն)	109 5/4
3 » Բարիդի » (պանդայի)	22 95
3 » » » (վճռակն)	23 02 1/2

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Օսմանեան Քոնսուլիտէ

Երեկ երեկոյ գոցուեցաւ	8 38 1/2
Պորսային գոցուելէն վերջը	8 38 1/2
Եւսթր Բերայի մէջ	»
Առաւօտուն բացուեցաւ	8 39
Բարձրագոյն գին	8 39 1/2
Նուազագոյն	8 39
Կէս օրին	8 39 1/2
Իւնիֆիէ Եգիպտական	67 30
Երեկ իրիկուն գոցուեցաւ	67 30
Բերայի մէջ	—
Այս առտու բացուեցաւ	67 32 1/2
Կէս օրին	67 32 1/2
Հէվալէսիդ	17 1/2
Փոխառութիւն 1863.....Ֆր. ...	63
» 1865	53
» 1869	47 50
» 1873	42
Պօն տիւ Թրէզոր	Անգլ. Լր. ... 49
Բուժէլիի երկաթուղի	Ֆր. ... 44
Օպիլիկասիօն տը Բրիտիթէ	» 378
Բաժնեթուղթ Լաւրիօմի	» 81

ԲԱԺՆԵՏՈՄԱՔ

Սօսիթէ Ժէնէրալ	Անգլ. Լր. ... 3 28
Գրէտի Ժէնէրալ (Գ. Կ.) ... Օսմ. Լր. ...	6 25
Պանք տը Գանա	» ... 5 30
Սօս. Շանթ է վալէօր	Օսմ. Լր. ... 3 30
Թրամուէ.յ.	» » ... 292 1/2

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	գրշ. ... 100
20 Ֆրանքնոց	» ... 87 27
Անգլիական ոսկի	» ... 110 8
Բօլ Իմբէրիալ	» ... 90 2
Գրիմից	» ... 51 15
Ռուսկի Թղթադրամ	» ... 8 92
» արծաթ	» ... 89 30
Ֆիօրին	» ... 9 2
Մէճ. արծ. (տարբ.)	» ... 108 3
Վէյնոց	» ... 102 30
Հինգնոց	» ... 102 30
Մէթալիք	» ... 98
Պղինձ	» ... 800
Թղթադրամ	» ... 3000

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 17 Սեպտեմբեր ժամ 3 վայր. 15 երեկոյ

Անգլ. քօնսոյի-է գոցուեցաւ	101 1/2
Օսմ. բացուեցաւ	8
» » գոցուեցաւ	8
Օսմ. փոխառութիւն 1865	10 5/8
» » 1869	9 1/2
» » 1871	67 5/4
» » 1872	17 1/2
» » 1873	8 5/8
Փոխառութիւն 1877	79 1/4
Պանք Օթօման	13 1/2
Ռուսական փոխառ. 73 (գ. Կ.)	93 1/4
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ)	61 5/8
» առանձն. (Բրիվիլէժիէ)	85 1/4
Տայրա Սանիէ	60
Տօմանիալ (փոխառ. Բօչիլա)	82 1/2
Հունգարական պարտաթուղթ 1877	102 1/2
Փոխանակութիւն Բարիդի վրայ	—

Վիէննա, 17 Սեպտեմբեր ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	121 85
Օսմանեան երկաթուղի	20 70

Բարիդ, 17 Սեպտ. ժամ 3 վայր. 15 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0.....բաց	109 02 1/2
» » 3 0/0.....բաց	78 70
Օսմանեան քօնսուլիտէ բանուեցաւ	8 05
» » գոցու. (գ. Կ.)	8 07 1/2
Օսմանեան փոխառութիւն 1863	—
» » 1865	—
» » 1869	48
» » 1873	43
Օսմանեան երկաթուղի	44
» Բէժիի բաժնեթուղթ	523 75
Պանք Օթօման	588 75
Գրէտի Լիօն	565
» Ֆօնսիէ	1318 75
Բաժնետոմս Լիօնի (գուբ. կար.)	1245
Սուէզի ջրանցք	1958 75
Ռուսական 5 0/0 1877ի	97 7/8
Խտայական Ռանթ	96 75
Արեւելեան Ռուս. (Ռիւս Օրիան.)	—
Եգիպտական միացեալ գոց	310
Սպանիական (արտաքին)	60 7/8
Բրիտիթէ Թիւրք	372 50
5 0/0 Հելլենական	358 75
Զէք Լոնտրայի վրայ	25 17

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Առ Գաւառացի Գործակալարար

ԳՐԸԱՐԱՆ

ՄԵՏԱՂԵԱՅ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ

ՏՈՒՓԵՐՈՒ

մասնաւորապէս Ծխախոտի համար

ԲԱՐՈՒՆԱԿ ԲՈՂԱՏԵԱՆ

Մենաշնորհեալ յՕսմ. Կառավարութենէ

ՇԱՏ ԱՃԱՆ ԳՆԵՐՈՎ Թիթեղեայ տու-
լիւր մասնաւորապէս ծխախոտի համար :

Գործին գեղեցկութեան, դիմացկունու-
թեան և այլ ամենայն տեղեկութեանց հա-
մար գիմել առ

Խ. ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

Ղալաթիա, Մահմադիյէ Գործ Բէ- 38

Պոլս, Ենի-ճաֆ, Չէլիկէրէ Գործ » 51

Գաւառներէ ուղղակի յանձնարա-
րութիւնք փութով կը կատարուին :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԵԱՅ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Թարգմանիչ

Կ. Ս. ԻԻԹԻՒՃԵԱՆ

Հրատարակիչք

Նշան Կ. Պէրպէրեան և Ս. Տէօճէթեան

Էօժէն-Սիւ գաղղիացի մեծանուն վիտա-
սանին նոյն նշանաւոր գործը, զոր Մասիսի
Մեծ. Խմբագիր Կ. Ս. Իլթիւճեան էֆէնտի
ասկէց 18 տարի առաջ թարգմանած և իբր
թերթին Մասիսի միջոցաւ հրատարակելէ
յետոյ՝ զատ ևս տպագրած էր, ժամանակէ
մը ի վեր ստառած լինելով, այս անգամ
Մեծ. Թարգմանիչը կրկին աչքէ անցուցած,
լեզուին մաքրութեանն և ոճերու գեղեցիկ
բացատրութեանց մեծ խնամք տարած և
մասնաւոր պայմանաւ մը մեղ յանձնած է

երկրորդ անգամ տպագրել պատկերաւարդ :

«Թափառական Հրեայն» 1600 մեծադիր
երեսի մօտ, 4 ընդարձակ հատորէ պիտի
բաղկանայ, մաքուր թղթի վրայ գեղեցիկ
տպագրութեամբ :

Ամբողջ գործը պիտի պարունակէ Գաղ-
ղիերէն ընտիր տպագրութենէ մ'ընդ օրի-
նակեալ և մասնաւոր խնամք փորագրեալ
100ի մօտ գեղեցիկ պատկերք, և բացի ա-
սոնցմէ, 60ի չափ ալ մեծադիր և ընտիր
պատկերներ, որք մաքուր թղթի վրայ զատ
տպագրուելով պիտի ղետեղուին գործոյն
մէջ :

Մէն մի հատորին բաժանորդագրութեան
գինն է կանխիկ 25 դրուշ :

Տպան եւ վեց երեսէ բաղկացեալ մէն մի
թերթ 50 փարայ :

Գաւառաց համար թղթատարութեան
ծախքն միատեղ հաշուելով, մէկ հատորին
գինն է 30 դրուշ :

Գաւառներէն բաժանորդ գրուիլ փա-
վաքողք պարտին բաժանորդագինն կան-
խիկ յղեալ Բուրաստան Մանկանց հանդիսի
խմբագրատունն հետեւեան հասցէիւ .

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. Պոլս Սուլթան-Համամ Թիւ 14

The «Economic» Co-Operative Society Limited

«ԽՆՅՈՂԱԿԱՆ»

ԳՐԸԱԿԻՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

(Ղալաթիա, Վոյվօտա փողոց, Օսմ. Կայս.
Պանքային դիմաց)

Տնօրէն Ժողովոյ օգոստ. 3 ի նստին
մէջ որոշուեցաւ սահմանափակ թուով
դասաւոր անդամներ ընդունիլ ընկերու-
թեան, միեւրանոցները. տոմսի մը գին
որոշուեցաւ տարեկան մէկ մէծիտիյէ
ամսոյս 15 էն սկսեալ. տոմս ունեցող-
ղըն իրաւունք պիտի ունենայ ընկերու-
թեան միեւրանոցէն ամեն ինչ գնել նոյն
նպատաւաւ, գնելով որով կը գնեն նոյն
իսկ Բաժնէրէ անգամը :

Օգոստոս 15էն յետոյ ընկերութեան
Մատակարարին գիմելով կարելի է քս-
տանալ տոմսեր և գնաց ցուցակներ :

Ղալաթիա, 5 սեպտեմբեր 1884

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՔԱԿԱՆ

33 րդ ՏԱՐԻ

1884 ՍԵՊՏԵՄԲԵՐ 7

ԹԻԻ 3734

ՐԱՖԳԻ

ԵՒ

ՀԱՅ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆԸ

Ա.

Երբ Պոլիս վերադարձայ Թիֆլիզէն, ամէն բարեկամներս անվրէպ ինձ կ'ուզէին հետեւեալ հարցումները. — Տեսա՞ր Բաֆֆին: — Խօսակցեցա՞ր հետը: — Ի՞նչպէս մարդ է: — Ի՞նչ կ'ընէ: Մինչեւ իսկ կային այնպիսիք որք երանի կարողացին այն աչաց ոյք արժանի եղած էին Հայ վիպասանը տեսնելու: Որպիսի՞ փոփոխում ժամանակի: Ատեն մը նոցա համար էին երանիներն որք Ս. Գեղարդն յիշմիածին համբուրած ի տուն կը դառնային: Բայց բարեչըման օրէնքը ճշմարտութիւն է: Գրքերը այժմ մրցում կ'ընեն մասունքներու հետ:

Եւ յայդմ ոչինչ կայ տարօրինակ: ցաւոց օրերու մէջ մեր հարց սրտերը կարօտալէզ էին միսթարանաց. երկրային յոյսը բառ մ'էր որ նշանակութիւն չունէր իրենց համար. Հայք բոլոր իրենց կարողութիւնները կեդրոնացուցած էին իրենց հոգիներուն վրայ: Այժմ այլ եւս այդ օրինակ տառապանաց օրեր չենք գուշակեր. այժմ նոր կեանք, նոր գաղափարներ եւ սոցա համար նոր առաջնորդներ:

Մին այդ առաջնորդներէն աներկբայապէս Բաֆֆի է: Այն մեծ համալրանքը զոր Բաֆֆի կը վայելէ ի Պոլիս եւ ի Ռուսիա, ունի իւր նշանակութիւնը ամէն անոնց համար որք քայլ առ քայլ կը հետեւին ազգին գաղափարաց զարգացման եւ փոփոխութեանց: Ո՛ր է անձնաւորութիւն երբ այս աստիճան իւր վրայ կը հրաւիրէ ազգին հա-

մախրալիւր ուշադրութիւնը, կրնանք ապահովապէս ըսել թէ այդ անձնաւորութիւնը ժողովուրդին վրայ իւր հզօր ազդեցութիւնն ունի: Այդ օրինակ ազդեցութիւն ձեռք բերել կարելի է միայն ժողովուրդին ըզգացմանցն ու գաղափարաց ճշմարիտ թարգմանն հանդիսանալով: Այդ թարգմանը կրնայ մի Ներսէս Պատրիարք լինիլ կամ մի Բաֆֆի, իւրաքանչիւրն ունենալով գործելու իրեն յատուկ շրջանակն: Ժողովուրդներն կը պարտին իրենց բարգաւաճումը գործիչներու մէջ աշխատութեան բաժանման: Ազգին սէրն ու յոյսը կը հաստատէ աշխատութեանց միջեւ ներդաշնակութեան կապը: Արդ երբ ուսումնասիրենք այդ անձնաւորութիւններն եւ իրենց գործերը, կըրնանք բաւական ճշդութեամբ գիտնալ թէ ի՞նչ է ազգին ոգին, ո՞յք իւր գաղափարներն, եւ ո՞ւր կը դիմէ:

Բաֆֆիի անունը Ռուսիոյ Հայոց մէջ ունէր արդէն իւր մեծ նշանակութիւնը, իսկ առ մեզ ժողովրդ աշխարհ եղաւ երբ Աբէ-Եփի մէջ հրատարակեցինք Խաչատուր Յէշտակաւուն: Իւր կամքէն անկախ պատճառներ անհնարին ըրած են Թուրքիոյ Հայ մաւրոյն ծանօթացնել Բաֆֆիի գործերն աւելի մանրամասնաբար:

Ընդհանրապէս աշխարհ բաւական աննշտապատ կարծիք կը սնուցանէ վիպասաններու համար: Վերջեալ Եփէր, ահա՛ այն գեղեցիկ տիտղոսը որ կը համարուի վիպասաններու շքանշանը: Այդ աննպատակ կարծիքը նախապաշարուած է, բայց նախապաշարումները ո՛րքան ալ խորը թափանցած լինին մարդկութեան ամէն խաւերուն մէջ, բայց եւ այնպէս նախապաշարուած են, եւ ներքի չէ վայնս ճշմարտութիւն համարել:

Նախապաշարունակները սովորութիւններ են . եթէ երբեք փոքր ինչ քննութեան ձանձրոյթն յանձն առնուի, շատ շուտ պիտի տեսնենք թէ ո՞րքան խարխուլ են, չըսենք իրենց հիմունքը, այլ իրենց յեցարաններն : Սակայն շատ դժար է մարդուս համար ի բաց վանել սովորութիւն մը որ իւր թէ՛ մարմնաւոր և թէ՛ մտաւոր ապրելու եղանակին մաս կը յօրինէ : Սյուպէս է նաեւ վիպասաններու մասին տիրած նախապաշարման համար : Ոչ մէկ դար այնքան չուայօրէն արտադրած է վէպեր որքան տասնեւիններորդ դարու վերջին կէսը . և ո՛չ մէկ դար ալ այնքան պարծենցեր է թէ ինքը դրականութեան մարմնացումն է որքան մեր այս վերջին կէս դարը : Կա՛մ պէտք է յայտարարել թէ վերացեալ դարու մը մէջ կ'ապրինք, կա՛մ պէտք է խոստովանիլ որ վիպասանութիւնը դրական գիտութիւն մ'է, և այնու միայն կարող եղած է այնքան բարդաւածում ստանալ դրական դարու մը մէջ : Չենք կարող առաջին յայտարարութիւնը բնել, ուրեմն յարկնք վերջնոյն :

Եւ արդարեւ է՞ր վիպասանը նկատել մի վերացեալ էակ : Դրական է այն անձը որ երկաթի կտորի մը վրայ կը կատարէ մանրախոյզ քննութիւններ . զրական է այն անձը որ ապաւինած ապակիի մը, կը տանայ աչքերովն ու մտօքը երկնային բարձր դաւառներու մէջ, աստղի մը հետքը որոնելու համար . զրական է նա որ մարդուս աղիքներն ու թղթերն իւր աշխատութեանց առարկայ ընտրած է : Վերացեալ է նա որ մեր սիրած կուսումնասիրէ, որոյ ծածուկ ցաւերն ճանաչելն շատ աւելի դժուար է քան նորա ջոշափելի վերքերն : Միթէ հեշտի է հրճուանք ազդել մեզ, սարսուռ և յուզումներ : Խորագնին քննել ժողովուրդի մը անցեալն, հեռատես ինել նորա ապագային համար, մատնանիչ ընել այն ճանապարհն ընդ որ պարտի ընթանալ, միթէ թեթեւ ուղեղի գործ է : Պէտք է արհամարհել զնա որ մեր որտի՛ն ամէն մէկ ծաղիկ, մեր հոգեղոյն ամէն մէկ սլացն իբր լուսանդկար մեր աչքերու առաջ կը պարզէ : Միթէ աւելի դիւրին է հոգեկան վշտերն սփռիլ քան մարմնոյ ցաւերը : Ճշմարիտ վիպասան մը այնքան դրական գիտուն մ'է իւր ճիւղին մէջ, որքան բժիշկ մը կամ երկրաչափ մը :

Բարեբաղդաբար ժողովուրդի հետ խօսելու կարող մեծ մտքերն, ուշ թէ կանուխ, կը հասնին իրենց նպատակին : Վաղուիէ՛ք մը, պետական անձ, երբ կը հեռանայ դիւանադիտական հրապարակէն, շատ շուտ իւր անունը կը մոռցուի . բայց Վաղուիէ՛ք իբր ազգային վիպասան մըն ուս ազգին ուշադրութեան առարկայն է :

Հոյլ ի հոյլ պետական անձանց անուններու շարին մէջ Պիքօնաֆիլտի մը անունը շուտով անտես կը լինի, բայց վիպասանը միշտ կենդանի է : Նոքա, որք համարած էին վիպասաններն թեթեւամիտ արարածներ, անշուշտ փութով վերահասու եղան իրենց սխալանաց, երբ տեսան թէ Անդլիոյ պէս ազգ մը, զոր հաւանօքն կարելի չէ մեղադրել իբր ժողովուրդ մը հետամուտ երեւակայական շահերու, կը վտահէր իւր ազգային բազղը վապասան մը երեւակայութեան : Եւ միթէ մինչեւ այսօր իսկ Անդլիոյ Պաշպանողական կուսակցութիւնը վըտով չը տեսներ թէ իւր առաջնորդներն կարող չեն իրենց ուղղութիւն ցոյց տալ այնքան ապահով կերպիւ որքան վիպասան Պիքօնաֆիլտ :

Ուրեմն երբ հայ մատենագրութեան մէջ հօր դիւրք մը կը գրաւէ վիպասանութիւնը, չենք կարող ողբեր ու կոծեր արձակել թէ՛ հայ դրականութիւնը թեթեւութեան դըրօշմօք կը մկրտուի : Ընդ հակառակն պէտք է գոհ մնանք և ուշի ուշով հետամուտ լինինք այն ուղղութեան ում հետեւած է, կը հետեւի և պիտի հետեւի հայ վիպասանութիւնը : Հայ վիպասանութիւնը կրնանք նըկատել մինչեւ աստիճան մը իբր մի վիճակագրութիւն մեր արդի դադափարներու, մեր արդի գոացմանց :

Քննելով այդ վիճակագրութիւնը, կը տեսնենք թէ մեր զանազան կարգի դադափարները համերաշխութիւն ունին իրենց մէջ և կը կազմեն ամբողջութիւն մը որ մեր ապագայ դարդացման երաշխաւորն է : Հայ վիպասաններն ի հանդէս կ'ածեն այդ համերաշխութիւնը, այդ ամբողջութիւնը :

Ճշմարտական վիպասանութեան քննադատք ուսումնասիրելով իրենց Պօպլիներու, Տօմէներու, Բարսիներու գործերն, այն եզրակացութեան կը յանդիմ թէ՛ Ճշմարտայի արդի վիպական դարձը չընծայեր մի հե-

դինակ որ կարող լինի իւր գործոց մէջ հան-
դիսանալ ներկայացուցիչ ֆրանսական ըն-
կերականութեան : Արդի վիպական դարոցը
մասնաւոր դասերու պէտք մնաց թարգմանն
է : Մեղաւորը մատենագիրները չեն համա-
րիր , այլ ֆրանսական ընկերականութիւնը որ
իւր ազգային հիմնարկութիւններով և դա-
դափարներովը չներկայացներ այն ամբող-
ջութիւնը որ միայն կարող է արտագրել
Ֆիլսոփիաներ և Ռիքարտսներ : Անգլիա
իւր ազգային հիմնարկութիւնները կրօնա-
կան նոր դաւանութեամբ զօրացուցած կը
ներկայացնէր հոծ միութիւն մը երբ Ֆիլ-
սոփիկ և Ռիքարտսը կը գրէին իրենց վե-
պերը : Անշուշտ հայ ազգի ներկայ դրու-
թիւնը չէ կարելի համեմատել Անգլիոյ վի-
ճակին հետ , սակայն կրնանք , պահպանե-
լով ամէն համեմատութիւններ , դտնել բազ-
դատութեան կէտերն : Մերենց , Մամուր-
եան , Պերճ Պաօլեանց , Տէր Սարգսենց , ի-
րենց պարագլուխ ունենալով Բաֆֆին , կը
ներկայացնեն հայ ազգի ոգին և ի նմա տի-
րապետող դադափարներն : Մեր վիպասան-
ներն ո՛րքան ալ տարբեր դրութեանց հե-
տեւին , ո՛րքան ալ իրենց նիւթ ընտրեն տար-
բեր ժամանակներու նկարագիրներ , բայց
ամէնուն մէջ տիրապետող ոգին միեւնոյնն
է , որով այդ վիպասաններն ճշմարտագէտ
կը ներկայացնեն հայ ազգի ոգին : Պատմա-
կան իմաստաբերութիւնը , որուն առաջ այն-
քան ընդարձակ հորիզոններ կրնայ պար-
գել մեր պատմութիւնը , բաւական լրջօրէն
կրնայ խորհիլ այն երեւոյթին վրայ զոր մենք
կ'ընծայենք : Ազգ մը որուն մէջ ա՛յսքան
զանազան կարգի բաժանումներ կը տիրեն ,
ազգ մը որ թէպէտ այնքան ցիրուցան չէ ,
որքան սխալմամբ կը կարծուի լինել , բայց
կը գտնուի ընդ հովանեաւ այնպիսի տէրու-
թեանց , որք իրարմէ բոլորովին տարբեր
քաղաքակրթութեան կը հպատակին , այդ
ազգը թէ՛ իւր հոգին վրայ և թէ՛ իւր գաղ-
թականութեանց մէջ կը սնուցանէ գաղա-
փարներու համերայխութիւն : Պ. Բաֆֆի
այդ գաղափարներու ամենէն կենդանի
ներկայացուցիչը հանդիսացաւ : Այնպիսի մը
տուր ի Ռուսիա հայ գիտնականին գրա-
դարանին , մտիւր հարուստին տունը , այցե-
լէ ազատին խրճիթը , դնա՛ գինուորին պո-
րանոցը , կամ վաճառականին խանութը ,

տե՛ս երիտասարդը , ծերը , աղջիկն ու ման-
չը , ամէն ոք յափշտակուած է Բաֆֆիով : Ին-
չո՛ւ : Վասն զի , ինչ որ ըսած են լոյ սրտի հետ
խօսող մեծ վիպասանութեանց համար , նոյնը
կրնանք ըսել ազգային վիպասանութեանց
համար : Այդ մեծ վիպասանութիւններն
գիտեն անոխալ կերպով թէ մեր հոգւոյ ո՛ր
թելերն պէտք է թրթռացնեն , իսկ ազգային
վիպասանութիւնը կարող եղած է հաւասա-
րապէս ներգործել մեր վրայ , իրբւ մարդ և
իրբւ հայ : Բաֆֆի լաւ քննած է մեր զգաց-
մանց բազկերակը և գիտէ թէ ո՛ր և է ազգի
համար յուսահատութիւնը մահու զանգակի
զօղանջն է : Մահաբեր անհատից , մահաբեր
է ազգերու համար « գերեզմանին այդ սեւ
կաթիլը » : Այդ յուսահատութիւնը յաւէտ
մեր սրտերէ հեռի պահելու համար ազգին
ամէն գեղեցիկ հոգիներն իրարու ձայն կու-
տային և Ազգային Բանաստեղծը կը հրա-
ւիրէ .

Գիտուն թո՛ղ գերեզ ժամ չէ կարդալու .

Գեղջուկ , գու էլ թո՛ղ եղնք ու գութան .

Տերտեր , գու էլ դադարէ մեռել թաղելուց :

Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԱՍՏՂԱԲԱՇԽԱԿԱՆ

ԵՐԿՐԱԳՆՏԻՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Աստղաբաշխութիւնը կը տիրէ ինչպէս
տիեզերաց ընդարձակութեան , նոյնպէս ալ
ժամանակաց անհունութեան վրայ : Վեր-
ջերս մեր գիտնական վարպետներէն մէ-
կուն հետ ամպամած արեւուն և ալխարհաց
ծննդագործութեան կազմակերպութեան
նախընթաց օրինօք կ'ըսողինք : Թերեւս
հետաքրքիրաւ ըլլայ այսօր ակնարկ մը ձը-
գել մեր մոլորակին նախնական վիճակին վը-
րայ , և այդ պարագայն ձեռք առնուլ ա-
նըրեւութացեալ դարերու ընդհանուր տե-
սարանը աշքերնուս սուջեւէն անցնիլ տես-
նելու համար :

Ժամանակ մ'եղաւ յորում մարդկութիւ-
նը չ'իար : Երկրս այն ատեն՝ այսօրուանէն
բոլորովին տարբեր վիճակ մը կ'ընծայէր .
փոխանակ մտաւորական ժիր և գործունեայ
կեանքին որ իւր մակերեւոյթին վրայ կը
յաճի , փոխանակ այդ բազմամարդ քաղա-
քաց , զիւլից , բնակութեանց , մշակեալ

դաշտաց, այգեաց, պարտիզաց, ճանապարհաց, երկաթուղեաց, նաւուց, գործարանաց, պալատանց, յիշատակարանաց և տաճարաց, փոխանակ այս անդադար գործունէութեան որ բնութեան ամեն ուժերէն օգուտ կը քաղէ, երկրիս խորերը կը թափանցէ, երկնից կազմութեան առեղծուածը կը հետաքննէ, տիեզերաց այլ և այլ անցքերն կ'ուսումնասիրէ, և կարծես թէ իւր վրայ կը կեդրոնացնէ ստեղծագործութեան ամբողջ պատմութիւնը, վայրի և անթափանցելի անտառներ կային միայն, լեռներէն ամառի ամառաց մէջէն ընթացող գետեր, լեռներ առանց վայրից, հովիտներ առանց տաղաւարի, երեկոյներ առանց երազացնոր խոհից, և աստեղապարզ գիշերներ առանց դիտող աչքերու: Ոչ գիտութիւն, ոչ մատենագրութիւն, ոչ արուեստք, ոչ ճարտարութիւնք, ոչ քաղաքականութիւն, ոչ պատմութիւն, ոչ բան, ոչ միտք, ոչ խոհք: Այն ժամանակ մարդկային կենաց թատերական անցքեր և կատակերգութիւնք՝ անծանօթ էին մեր մոլորակին վրայ: Համակրութիւն և ատելութիւն, սէր և նախանձ, բարութիւն, խանդ, անձնուիրութիւն, զոհ, և ամենայն ազնուական կամ վատթար զգացմունք, որոնք կերպով մը մարդկային կերպասին դանաղան թելերը կը կազմեն, դեռ տեղի չունէին յաշխարհի աստ: Երկրային հոյրենեաց քաղաք ոցիք՝ կ'ադրէին յանդէս, և կ'աշխատէին առանց որոշ նպատակի: Մանրադանդաղ ստեղծանիք (1) կոչեցեալ ահա դազանն ոտքին տակը կը ճզմէր անտառներու միջոց գոյն բացօդեայ տեղումներ ընծիւղած ծաղիկները: Վիթխարի Մեծազաւան (2) ծառոց արմատները կը փորէր իւր կնճիթով: հզօրն Միլոտոն (3) կաղնեաց ստորին ճիւղերը կը կրծէր: հսկայակերպն Հոյադազան (4), երկրային ստնաւոր կենդանեաց դասէն ամենէն յաղթանդամը, իւր երկայն պատիճները խորասուզելով ծովուն մէջ՝ արմատախիլ կ'ընէր անդարար բոյսերը: Կային նաեւ Մեղօբութեք և Տրիօբութեք (5) կոչուած

կապիկները որ դիւրաթեք կ'ոստոստէին նախաջրհեղեղեան Յունաստանի բլրոց վրայ և Պարթենոնի բարձանց վրայ կ'սկսէին ընտանիք կազմել:

Այդ հեռաւոր ժամանակաց մէջ յանդէս իւր ապագայէն կը քննարար Բարիկ: Հին անտառ մը իւր մուսլ վերարկուն սփռած էր ամբողջ Ֆրանսայի, Պելճիգայի և Գերմանիոյ վրայ: Սէն գետը, ներկայ ժամանակէս տասն անգամ աւելի լայն, կ'ողողէր այդ դաշտերը՝ ուր այսօր մեծ մայրաքաղաքը կը պարզէ իւր հրաշակերտները: ձկունք՝ որոնց գոյութիւնը վերցած է՝ ալեացը մէջ գիրար կը հալածէին: Թռչունք՝ որ ալ չկան՝ կղզիներու մէջ կ'երգէին: սողունք՝ անհետ եղած արդ՝ ժայռերու մէջ կը սողոսկէին: Անասնական և բուսական տարբեր ցեղեր, տարբեր եղանակ, տարբեր կլիմայք, տարբեր աշխարհ:

Երկրիս պատմութեան դէպի աւելի հին ժամանակները վերջոտնելով՝ այնպիսի դար մը կը հասնինք, յորում Փարիզ և Ֆրանսայի մեծագոյն մասը ի ջուրս խորասուզեալ էր, երբ ծովը կը տարածուէր Շէրպուրկէն Օբլէան, Լիօն և Նիս, յորում անասունք և ծաղիկներ իրենց յաջորդներէն այնքան տարօրինակ կը տարբերէին որ ապահովապէս Արուսեկին և Հրատին մէջ բնակաւորք աւելի կը նմանէին մեզի: Ահաւոր մաշկամատն (1) սողուններ հոլաթեւ օձտէին երկնից երեսը: Երկրիս ուրուատնախ խոճապք հաւճաւորք (2) և այդ թռչող վիշապներ, այդ հսկայ չղջիկներ՝ օդոյ գերիշխան տէրն էին յայնժամ: Երկերկրեան մեծականիք (3) թանձրակտուցքն (4) սողունք զեռունք (5), խժաղուժ իրենց անուան պէս, ծառոց վրայ կը քառէին, ոտքով ձեռքով մաղցի ժայռից բարձունքը կ'ընէին, օդոյն մէջ կը ճախրէին իրենց թաղանթային անկարգելները պարզելով, և երկաթեղներու պէս ի ջուրս գահալիւծէին: Միեւնոյն ժամանակ հսկայակերպ սողուններ (6) ձկնամողէզք մերձամողէզք (7) վիթխարիք՝ յուզեալ ալեաց մէջ

- (1) Mastodonte Յրածոյից դասէն
(2) Megathérium » »
(3) Mylodon » »
(4) Dynothérium
(5) Mésopithèque Eryopithèques

- (1) Pterodactyle
() Vespertilion
(3) Dimorphodon macronyx
(4) Crassirostris
(5) Ramphorynchus
(6) Saurien
(7) Ichtyosaure Plesiosaure

կը մաքառէին, իրենց վայրագ ունաձայններով օդը լեցնելով. մեծադուլս լայնակըզակ հրէշներ, որոնց հասակին երկայնութիւնը 10-12 մեդրէն պակաս չէր, (մինչեւ 2072 ակուայներ համրած են այդ հոյամոդէշներէն⁽¹⁾ ունաց գլխոյն մէջ)։ Մեծամոդէշը⁽²⁾ և մեծազեռուը կ'ողեւորէին անտառաց առանձնութիւնը որոնց մէջ բարձրաբերձ ծառեր, լայնաաղարթ ծառանման տունիկեր, կոնաբերձ բոյսեր⁽³⁾ իրենց բրդածեւ գաղաթուները կ'ամբառնային, կամ իրենց կանաչ գոմէթները կը տատանէին։ Այդ մեծամոդէշները ազեւազներու⁽⁴⁾ ճնւով՝ 14 մեդր երկայնութիւն ունէին. մեր ամենաբարձր տուներէն մեկուն վրայ թաթերին գնելով հենդերորդ յարկին պատշգամբին առջեւ կրնային ճաշակել։ Ի՞նչ անհէթեթ գանգուածներ, ի՞նչ անասունք, ի՞նչ անխօս տունիկ՝ բազդատումաք մեր արդի աշխարհին։ Ոչ մէկ մոտաւորական նայուածք կար այդ մեծի տեսարանները դնահատելու, ոչ մէկ մարդ կային ականջ բացուած էր լսելու՝ այդ վայրենի ներդաշնակութիւնները, և ոչ մի մոտածութիւն արթնցած էր այդ նախաջրհեղեղեան աշխարհի մոգական տեսարաններուն առջեւ։ Ամբողջ օրը արեւը կը լուսաւորէր անասնային կենաց կռիւներն ու խաղեր։ Գիւերը լուսինը լուսեայն կը նշողէր անխնայագէտ բնութեան քունին վերեւ։

Երկրի ծննդենէն ի վեր, այն հեռաւոր դարերէն սկսեալ յորում արեգակնային ամպամած զանգուածէն բաժնուելով առանձին մոլորակ գոյացաւ, գնդաձեւ պնդացաւ, պարեցաւ, հաստատեցաւ և բնակելի դարձաւ, այնքան միլիոնաւոր տարիներ իրարու յաջորդեցին որ մարդկութեան ամբողջ պատմութիւնը այդ անհուն շրջանին առջեւ աննշան կէտ մ'է։ Ապահովաբար մարդկային կենաց 15-20 հազար տարիները, արդի երկրաբանական շրջանին փոքրիկ մէկ մասը հազիւ կը կազմեն։ Ննթագրելով առնուազն հարիւր հազար տարուան կեանք ներկայ շրջանին, որն որ իւր կենսական նըշաններէն չորրորդը ըլլալ կ'երեւայ, աշխարհիս սկզբնաւորութենէն ի վեր, և երկրաբա-

նօրէն՝ չորրորդ կը կոչուի. երրորդ դարը 100,000 տարի տեւողութիւն ունեցած է, երկրորդ դարը 1,200,000, և առաջին դարը 3,000,000 տարիէն աւելի։ Հետեւաբար առնուազն ընդամենը 4,700,000 տարի կը հաշուուի բազդատումաք գերազանց անասնային և բուսական սերնդոց սկզբնաւորութենէն ի վեր։ Բայց այդ դարերէն առաջ, նախնական հանգրձն ժամանակ մ'ալ եղած է, յորում նորածին կեանքը իւր սկզբնական տարերքը ունեցած է աւելի ստորին տեսակներէ, որպիսիք են ջրաբոյս խոտեր ողորկապատեանք, թուլատարրք, առանց ողնայարի, ողնայարովք՝ առանց գլխի, և այս նախնական ժամանակը՝ երկրաբանական կազմութեանց խաւերուն հարիւրին 550-մասը գրաւած ըլլալ կ'երեւայ։ որով որ նախորդ հաշով ինքնիրեն 5,500,000 տարուան կեանք ունեցած պէտք է ըլլայ։

Այս երկրային շրջանին 10,000,000 տարիները կը ներկայացնեն կենաց երկայնութիւնը։ Բայց նախապատրաստութեանց ծընընդագործութիւնը՝ անբազդատելի կերպիւ աւելի երկարատեւ եղած է։ Առաջին կենդանի էակին նախնթաց՝ մոլորակային շրջանը, շատ աւելի երկարատեւ եղած է, քան այլ և այլ բուսական և անասնոց տեսակներու յաջորդութեանց շրջանը։ Խոհական փորձառութիւններ կ'առաջնորդեն մեզի մոտածելու որ հեղուկ վիճակէն պնդացած վիճակի հասնելու համար 2000 աստիճանէն 206 աստիճան պաղելու համար մեր երկրագունտը՝ 550 միլիոն տարիէն պակաս անցուցած չի կրնար ըլլալ։

Ի՞նչ պատմութիւն է աշխարհի մը սրտմութիւնը. ջանալ զայն ի միտ առնուլ բընութեան ամենէն խորին և կարեւոր գաղտնեաց հասու ըլլալու ազնուական փառասիրութիւնն ունենալ է. տիեզերաց վարչութիւնը մէջերնին բաժնող հին աստուածոց խորհուրդներուն վերահաս ըլլալ փափաքի է։

Ն. Ի՞նչպէս հետաքրքրութիւն չ'զգալ արդի գիտութեան հրաշալի յառաջադիմութեան որն որ՝ երկրիս գերեզմանները փորելով, հետադառնելով գիտցաւ յարուցանել մեր անհետացեալ նախնիքը։ Մարդկային հանճարոյն հրամանէն՝ այդ նախաջրհեղեղեան հրէշները իրենց սեւ գերեզմաններուն մէջէն ընդոստուցեալ և մանաւանդ

(1) Dinosauriens

(2) Iguanodon et Megalosauve

(3) Conifères

(4) Kangourou

կէս դարէ ի վեր մէկիկ մէկիկ իրենց պապաններէն ելան կանգնեցան, քարահատներէ, հանքաց հորերէ, դեանափոր ճանքաներէ, ամեն բրածներէ, և երեւցան ի լոյսն Արեւուն: Ամէն կողմէն՝ դժուարաւ, ծանրադանդաղ, քուներնին դեռ գլուխնին, խորտակեալ կտոր կտոր, գլուխն հոս, սըրունքն անդին, շատ անգամ անկատար այդ գիպիները՝ ջրհեղեղին ժամանակէն քարացած՝ դատաստանական փողին ձայնը լսեցին, (ըսել կուզեմ գիտութեան դատաստանին) և յարութիւն առնելով, ամեն երկրէ, ամեն դարէ՝ օտար փաղանդներու բանակի մը պէս՝ ահա առջեւնուս կ'անցնին, տարօրինակ, անակնկալ, ձախող անհետեւի հրէշաւոր՝ կարծես թէ ուրիշ աշխարհէ մը կուգան, բայց հզօր, հաստատուն, դոհ իրենցմէ, կարծես թէ իրենց արժէքը դիպցող և իրենց արձանական լուծեանը մէջ կըսեն. «Ահաւասիկ մենք ձեր նախահաւը մենք ձեր նախածնողք, մենք՝ առանց որոյ դուք չպիտի ըլլայիք: Մեզի նայեցէք, և մեր մէջ փնտռեցէք ձեր կուծեան սկզբնաւորութիւնը. որովհետեւ մենք ենք որդի ձեզ հաստեցիք: Ձեր աչքերը որոնցով կ'անդ ածէք անհուն մեծութիւններն և անսահման դուզնաբեայքը, աւասիկ նոցա առաջին փորձերը թէ եւ տկար, համեատ, սկզբնական, բայց շատ կարեւոր վասն զի եթէ այդ առաջին փորձերը մեր վրայ յաջողած չըլլային՝ դուք կոյր պիտի ըլլայիք: Ձեր ձեռքերը որ այնքան վայելուչ և իմաստուն կերպով շինուած են՝ ահա խնայիտի թաթերու կատարելագործումներն են. շատ մի՛ խնդաք մեր թաթերուն վրայ: Եթէ ձեր ձեռքերը շատ օգտաւէտ և հաճոյական կը գտնէք: Ձեր չրթուքը, լեզուն և ախոյեները շատ փափուկ, սիրուն և դեղեցիկ են, բայց մեր բերանները, մեր ցըռուկները, մեր ճանկերը և մեր կտուցներն են՝ որոնցմէ ձեր չրթուքը ձեւացեր են: Ձեր սրտերը հեղիկ ու հանդարտ և խորհրդաւոր կերպով կը բարախեն, և այդ մարդկային բարախումը, զոր մենք չենք ճանչնար, կըսեն թէ ձեզի այնպէս խոր և ներքին յուզմունք կը պատճառեն, որ երբեմն անոնցմէ ամենէն աննշանը դուրսընելու համար՝ բոլոր աշխարհս կուտայիք, և ահա անձը ինչպէս արեւան չրջանը սխաժէ, ահաւասիկ առաջին սիրտը որ բարախեր

է: Գաղով ձեր ուղեղին՝ անով է որ ձեր վրայ կ'ըքանչանաք, հոգւոյն և մտաց գահը անոր մէջ կը փառաբանէք, և անոր անբաղդատելի դիւրագործութիւնը՝ այն աստիճան կը գնահատէք որ՝ հազիւ թէ կը համարձակիք անոր փափուկ կազմուածը հետազօտել: Իսկ արդ ձեր ուղեղը՝ մեր ծուծն է, նոյն իսկ մեր ողնայարներուն ուղ և ծուծը՝ զարգացեալ, կատարելագործեալ և յստակեալ: և առանց մեզի չպիտի ըլլային ոչ երկրաբան, ոչ աստղաբաշխ, ոչ բնագիտութեամբ, ոչ վիպասան, ոչ իմաստասէր, ոչ բանաստեղծ: Այո՛, ահաւասիկ եմք մեք, ողջունեցէ՛ք ձեր նախահաւքը:»

Այսպէս պիտի խօսէին ամեն այդ բրածոյները, կապիկները: Նախնականը ⁽¹⁾ պարկաւոր չորքոտանիք ⁽²⁾ թռչունք, զեռունք, վիշապք, երկակենցաղք, ձկունք, թռչատարք և իրաւամբ. վասն զի մարդս բնութեան ծառին բարձրագոյն ոստն է, իւր արմատները հասարակաց հողին մէջ խորասուզեալ են, և այն ծառը որ այդ դեղեցիկ պտուղը հասուցած է, ամեն այդ դանաղան տեսակներէն յառաջացած է, երկւոյթը՝ այնքան տարբեր, այլ էութեամբ մերձաւոր, ազդակից և բոլոր:

ՔԱՄԵԼ ՅԼԱՄՄԱՐՈՆ
(Մշակուել յաւերտ Բնակ)

ԶԻՆԱՅԻՔ

ՆԿԱՐԱԳՐԵԱԼ ՅԻՆՔԵԱՆՑ

Ի ԶԵԼՔԵ-ԹԵԼԻ ԲՆԱԿԵՐԷ
ՇԽԱՆԻՔԻ ԿԵՐԷԷ ԶԻՆԱԿԵՐԷ Ի ՓԱՐԷԼ

Ա.

ԸՆՏԱՆԻՔ

(Շարունակութիւն Տես Թիւ 3733)

Մէն մի ընտանիք իւր սովորութիւնները կանոնաւորող սահմանադրութիւն մ'ունի, տեսալ մը զբաւոր օրէնք: Ընտանեաց բոլոր ողբն հոն արձանագրուած է՝ հանդերձ իւրաքանչիւրին յատուկ եղող գործածութեամբ: Տեսնողը կոտակագիր կը կարծէ: Օրինակի համար, այս խնջ հողին հատկը

(1) Pros'miens

(2) Morsupiaux

ծերոց համար հանդատեան թուակ պատ-
րաստելու սահմանեալ է : Ուրիշ մը՝ քննու-
թիւն անցունող պատանեաց շնորհուկիք
պարգեւներն ապահովելու համար պէտք ե-
ղած դումարն ընձեռելու սահմանեալ է :
Տղայոց կրթութեան ծախքն հոգալու ծա-
ռայող հասոյթք , նմանապէս ամուսնացեալ
աղջկանց պարգեւներուն յատկացեալ հա-
սոյթք , միով բանիւ նախատեսեալ պիտոյից
պատասխանող ամեն ծախք արձանագրեալ
են հասութից մէջ :

Ընտանեկան սահմանադրութիւնք՝ ո՛չ մի-
այն նիւթական կենաց պայմանները կը սահ-
մանեն , այլ եւ պարտականութիւններն : Յա-
տուկ յօդուած ունին պատիժներ տրամադ-
րող ընտանեաց այն անդամին համար , որ
մեղադարտ վարմունքով կամ անառակու-
թեամբ նախատինք կամ արատ բերէ ըն-
տանեաց պատուոյն :

Անշուշտ չկարծուիր որ այս սովորու-
թիւնը կրնան հաստատ մնալ՝ եթէ դաստի-
արակութեան մէջ ամեն ինչ զանոնք յար-
գելու յայտարարութիւն չընէ : Մեր դաստի-
արակութեան դրութիւնը ճշդիւ այն նպա-
տակին ծառայելու սահմանեալ է , այսինքն
գերազանցաբար ընտանեկան սէր ներշնչե-
լու : Առանց այս նախազգ ուշութեան , ըն-
տանիքն հաւանաբար այնչափ բաժանեալ կը
լինէր Արեւելից մէջ , որչափ բաժանեալ է
Արեւմուտս , ուր , պէտք է խոստովանիլ ,
ոչ եւս դոյութիւն ունի իբրեւ ընկերային
ուժ . ուր ուրիշ արդիւնք չունի , բայց մի-
այն յարաբերութիւններ ստեղծել , որոց օգ-
տակարութիւնն յայտնի կը լինի անակնկալ
ժառանգութիւններ քաղելու համար . պա-
րագայ մը , որ միայն կը գարթուցանէ ըն-
տանեկան հոգին :

Հինդ ընդհանուր սկզբունք կան , որք
դաստիարակութեան միջոցաւ անվթար կը
պահեն ընտանեկան սէրն : Ասոնք են՝ հա-
ւատարմութիւն առ վեհապետն , ակնածու-
թիւն առ ծնողը , միութիւն ամուսնոց մէջ ,
համաձայնութիւն եղբարց մէջ , հաստատու-
թիւն բարեկամութեանց մէջ : Այս սկզբունք
դաստիարակութեան էութիւնն իսկ են , և
կէտ նպատակի ունին մեծամեծ մտաց մէջ
այն համուլումն որ հարկաւոր է ընտանիքը
սիրելու և անոր հնաւանդ կազմաւորու-
թիւնն անեղծ պահելու համար , հակառակ

անհամաձայնութեանց բնաւորութեան , որք
ընդհանրապէս իբր չքմեղանք կը ծառայեն
ամեն անարդարանալի անկարգութեանց :

Ընտանիքն , որոյ մէջ կը ծնինք , խաղա-
ղութեան քառսուն դարեր ունի իւր ետին ,
և եկող անցնող մէն մի սերունդ կ'աւելցնէ
անոր շուքն : Ուստի պէտք չէ՝ զարմանալ
եթէ ընտանեկան հոգին յոյժ գօրաւոր է
Չինաստանի մէջ , և եթէ մեր հաւատոյ հան-
գանակին առաջին յօդուածն հաւատարմու-
թիւնն է առ վեհապետն : Արդարեւ վեհա-
պետը մեր շէնքին կամարին բանալին է ,
ամեն ընտանեաց գլուխն է , նահապետ մ'է ,
որում կը պարտին ամեն անձնութիւնք :
Ծառայել վեհապետին , ծառայել է տիեզե-
րական ընտանեաց մեծ պետին , և իւր սե-
փական ընտանիքը պատուել : Այս է պատ-
ճառն , որ պետական պաշտօնի մէջ՝ գլու-
նուիլը փառասիրութեան ամենէն բարձր
չարժաոյիթն է Չինաստանի մէջ :

Ծնողքը պատուել կամ սիրելն այնպիսի
զգացում մ'է , որ ամեն կրիմայից տակ կը
տեսնուի , վասն զի մարդու սրտին մէջ ապ-
րող բնական զգացում մ'է : Չինաստանի մէջ
ծնողաց պատիւն յոյժ մեծ է , և իւր մաս-
նաւորութիւնն ունի սա՛ իրողութեան մէջ
թէ ծնողք իրենց որդւոց մատուցած ամեն
ծառայութիւններէն օգուտ կը քաղեն : այն-
պէս որ ո՛չ միայն որդիքն յարգանք և ե-
րախտադ խուրթիւն կը պարտին իրենց ծնո-
ղաց , այլ և անոնք որ բարիք մը տեսնեն
որդւոցմէն , ծնողացն երախտապարտ կը
լինին :

Երբ պետութեան պաշտօնեայ մ'աղ-
նուականութեան տիտղոս կամ աստիճան
ստանայ , ծնողքն ալ աղնուական կը լինին :
Ազնուականութիւնն յետսագոյ ելել արդիւնք
մ'ունի . քանի որ մէկու մ'աստիճանը բարձ-
րանայ , անոր ծնողաց աստիճանին պատիւն
ալ կը բարձրանայ :

Այս սովորութիւն նշանական է , զի խոր
տարբերութիւն կը հաստատէ ընդ մէջ բա-
րուց Արեւելից և Արեւմտից : Ազնուաիւ-
նութիւնը մեր մէջ միայն վեհապետէն
շնորհեալ պատուոյ տիտղոս մը չէ : Երկու
տեսակ ազնուականութիւն ունինք մեք :
Մին ժառանգական է , եւ միայն անդա-
նիկ որդւոց կ'անցնի , ինչպէս է տակաւին
Անգլիոյ մէջ , միւսը պետական պաշտօնի
աստիճանին կապուած է :

Ժառանգական ազնուականութիւնն հաղ-
ուադէսի առթիւներու մէջ կը շնորհուի : Օ-
րինակի համար, պատերազմական յաղթու-
թեան նման բարձր ծառայութիւններ պա-
տուելու և անմահացնելու համար կը տրուի :
Ընկերական պաշտաման աստիճանին կապ-
ուած ազնուականութիւնն անձնական է,
Ժառանգական չէ, վաւարաց չանցնիր, այլ
միայն ծնողաց : Պետական պաշտօնատարի
մ'աստիճան տրուեցա՞ւ, ծնողքն ալ նոյն
աստիճանը կ'ստանան, և հեղինակի իրա-
ւամբ, եթէ կրնամ այսպէս ըսել, կ'ազնուա-
կանան, որպէս զի յարգանք ընդ ունին ի-
րենց որդիէն : Բայց պաշտօնատարաց որ-
դիքն, ինչ որ ալ լինի հօրերնուն աստիճա-
նը, բնաւ որ և է արտօնութեան մ'իրա-
ւունք չունին :

Այսպէս չինական ազնուականութիւնը
կը բաղկանայ պաշտօնական աստիճանաւոր-
ներէ և Ժառանգական ազնուականներէ :
Այս վերջինն, եթէ անձնական արժանիքն
իրեն նեցուկ չունենայ, որ և է ազդեցու-
թիւն մը չունի երկրին մէջ :

Ըսի թէ ամուսնոյ մէջ միութիւնը՝ դաս-
տիարակութեան հիմնադրին մասն եղող
սկզբունք մ'է . այնպիսի սկզբունք մ'ար-
դարեւ, որոյ դերազանցութիւնը որչափ գո-
վենք՝ քիչ է, վասն զի Զինաստանի մէջ ա-
մուսնութիւնն անքակտելի է : Այս խօսք
պէտք չէ օրինական տեսակետով հասկնալ,
վասն զի չինական օրէնքն, ինչ ինչ ասիթ-
ներու մէջ, ամուսնաւուծութիւն կը հրամա-
յէ, այլ ընտանեաց և աւելի մասնաւորա-
պէս ծնողաց պարտք եղած յարգանաց տե-
սակէտով :

Ամուսնութեան անլուծանելիութիւնը
բացորոշ պատճառ մ'ունի, որ նոյն իսկ ա-
մուսնութեան կատարուելուն պարագայնե-
րէն կ'սխալեալ է : Զինաստանի մէջ դեռադի
հասակի մէջ կ'ամուսնանան երիտասարդք,
և ծնողք ինքնին կ'ընարեն իրենց որդւոց
յարմարած աղջիկն :

Եւրոպիոյ մէջ, ընդհակառակն, երիտա-
սարդաց ձեռքն է որոշել թէ իրենց դորձին
կը յարմարի՞ ամուսնանալ, կամ թէ ամուրի
կեանքէ հրաժարելու ժամանակն եկած է :
Բազմաթիւ պատճառներ կան, որոց համար
կը զտնուին ամուսնութեան ամենէն գեղե-
ցիկ տարիներն, որը կանանց համար ամե-

նէն երջանիկներն են : Մեր մէջ տախախն
կը պահենք հին ժամանակաց սովորութիւն-
ները : Մնողք կ'ամուսնացնեն իրենց որդիքն,
և կը հաւատան իրաւամբ թէ իրենց որդ-
ւոյն յարմարած կինը լաւ ընտրելու համար
իրենց փորձառութիւնն անօգուտ չէ :

Ամուսնութիւնը Զինաստանի մէջ միմի-
այն ընտանեաց վերաբերեալ օրէնք մը հա-
մարուած է : Նպատակն է ընտանեաց ա-
ճումն, և ընտանիք մը, որչափ բազմաթիւ
լինի, այնչափ զարգացուն և ծաղիկեալ վի-
ճակի մէջ է : Ուրեմն տրամաբանական է որ
ամուսնացեալք յարգեն իրենց ծնողաց կամ-
քով կատարուած միութիւնը, նոյն իսկ յա-
նուն որդիական պարտականութեան :

Եղբայրութեան խօսք ալ ըրի : Ունայն
բառ մը չէ այս : Մեր մէջ բառերն իրական
են միշտ, և եղբայրութիւն բառն ալ, մա-
նաւանդ եղբարց մէջ, ճշմարիտ իրականու-
թիւն մ'ունի :

Եղբայրութիւնն զգացում մ'է, որոյ ազ-
բւերն ընտանեաց մէջ է, և անտի կը քաղէ
իւր ուժը : Զարմանալի չէ ուրեմն թէ այն
ընկերութեանց մէջ, ուր ընտանիքը կոր-
սուած է, եղբայրութիւնն ալ իւր բնութիւնը
կորուսած լինի : Անոր տեղ տեսակ մ'զգա-
ցում անցած է, որ համակամութեան կը նը-
մանի — չեմ կարծեր որ քրիստոնէական լի-
նի —, և որ՝ սովորութեան օգնութեամբ՝
վերջապէս բարեկամաբար ասլորելու ձեւ մը
կ'առնու : Մեր բարքերը բոլորովին տար-
բեր են :

Բարեկամութիւնն ալ մեր ամենէն թան-
կազին պարտականութեանց մասն է . անօ-
գուտ զգացում մը չէ : Բարեկամք իրօք բա-
րեկամ են . և Նափոնթէնի դորձածած բա-
ռը փոխ առնելով ես ալ կ'ըսեմ թէ ո'չ անու-
նը, ո'չ իրը, հաղուազ իւտ չեն : Մինչեւ իսկ
վարեմի բռնաձեւ մ'ունինք, որ ժամանա-
կաւ կ'երգուէր, և որ բարեկամական պար-
տականութիւնները կը սահմանէ պարզապէս :
Ահաւասիկ տառական թարգմանութիւնը .

« Յանուն երկնից և երկրի

« Առաջի Արեւու և Լուսնի .

« Յանուն իրանց հօր և մօր

« Ա և Բ երգումն անխախտ բարեկամութիւն :

« Եւ արդ, եթէ Ա կառք մը նստած,

« Հանդիպի Բ ին, որ խոտէ գլխարկ մը դրած
լինի,

« Վար պիտի իջնէ իւր կառքէն ,

« Եւ Բ ի գէնն երթայ քաղելով : »

« Ուրիշ օր մ'ալ Բ գեղեցիկ ձիով մ'ուղեւո-
րած միջոցին »

« Եթէ հաղիպի Ա ին , որ կրնակը մեծ ծրար
մը բեռնած լինի ,

« Վար պիտի իջնէ ձիէն ,

« Ինչպէս Ա վար իջեր էր իւր կառքէն : »

Ահա բարեկամութիւն գործնական , որ քսակէն իսկ անդին կ'երթայ , այն հրուան-
դանէն , յորմէ բարեկամութիւնը զժկամա-
կելով կ'անցնի , որպէս թէ զուարճական ար-
հեստ մ'եղած լինէր :

Բարեկամական անձնութեան օրինակ-
ներ շատ կան մեր ազգային պատմութեան
մէջ : Օրինակի համար , մէկն իւր տնանկ
բարեկամին կը հանդիպի ճանքան , և իւր
զգեստներն հանելով անոր կը հագցնէ : Այլ
գործ բաւական յաճախ կը տեսնուի մե-
րկրին մէջ , բայց Սուրբ Մարթէններ չըս-
տեղծեր : Նշմարած եմ , որ քրիստոնէայ եր-
կիրներու մէջ ընդ հանրապէս հասարակաց
սքանչացման կը ներկայեն բացարձակապէս
հասարակ բարոյական գործեր : Առաքիւն-
ութեան կիրառութիւնն իբրեւ սքանչելիք կը
ներկայացուի : Արդեօք չափազանց խոնար-
համութիւն է թէ պարզապէս իւր տկարու-
թեան խոստովանութիւն . ես վերջին կար-
ծեաց կը հակիմ առաւել :

Ըստ իմ դատողութեան , ողորմութիւն
բաւը մարդկային շատ զգացումներ կը խան-
գարէ : Աստուծոյ և նորա սրբոց , այսինքն
ամենուն հաճոյ լինելու պահանջումով իւր
մասնազրառութիւններն անտես կ'ընէ մարդ .
ողորմութիւնը բարեգործելու եղանակ մ'է ,
բայց որովհետեւ աստուածային եղանակ
մ'է , մարդիկ նմանողական մեթոտով միայն
կը գործածեն զայն : Տեսակ մը դադունիք
կայ այդ պանակին մէջ որ չսովորէր : Ես
սա մտածութիւնը կարդացած եմ . « Հրեշ-
տակութիւն ընել ուզողն անբանութիւն կ'ը-
նէ : » Նոյնպէս կը կարծեմ որ Աստուծոյ
գործ կատարելու ճիշդ հրեշտակի գործ չկա-
տարեր : Մեք այդ փառասիրութիւնները չու-
նինք և աւելի լաւ ենք :

Գժբաղդութեան մէջ ինկած բարեկամ-
ներու օգնելը մեր մէջ սովորութիւն է , ա-
ռաքիւնութիւն չէ :

Ոչ միայն հարուստներն օգնութիւն կ'ը-
նեն իրենց գժբաղդ բարեկամներուն , այլ

և աղքատներն ալ կ'օգնեն իրենցմէ աղքա-
տագոյն բարեկամաց : Եթէ զրադիտաց դա-
սուէն վերաբերի որ , իւր ամեն բարեկամ-
ներն հանգանակութիւն կ'ընեն անոր օգ-
նելու համար : Եթէ գործաւոր է , արհես-
տակիցներն հանգանակութիւն կ'ընեն անոր
համար : Սովորութիւն մ'է այս մի եւ նոյն
դասու մարդոց : Մինչեւ իսկ հանգանակու-
թիւնը կը լինին բարեկամաց մէջ իրենցմէ
միոյն ամուսնութեան նախաստեղծ համար :
Ուրիշ հանգանակութիւնք ալ կը լինին մեռ-
եալ բարեկամի մ'այրւոյն օգնելու կամ ա-
նոր զաւակները մեծցնելու համար . վերջա-
պէս մարդկային էական առանձին և լքեալ
չէ :

Արեւմտեան բարուց մէջ մտքիս զարնող
բանն է մարդկային սրտին անտարբերու-
թիւնն : Այլոց գժբաղդութիւնը կարեկցա-
կան հրապոյր չունի . ընդհակառակն , զրող
իսկ եղած է թէ հաճոյք կը պատճառէր :
Գովելլի բան չէ այս . և սակայն ո'չ սիրտ
կը պակի , ո'չ ողջմտութիւն : Միակ պատ-
ճառը գործնական մարդ լինիլն է :

Ալֆրէտ Միւսէ , շատերու սիրելի բա-
նաստեղծն այս սովորը գրած է .

Նա որ չգիտեր հրատապ գիշերներու մէջ
Քուենն ցատկել , առանց պատճառի և բոկոսն քաղել ,
Աղօթել , յորդառատ արտօնք թափել ,
Եւ անհունին առջեւ դողդոջուն ձեռքեր կցել ,
Արեւը լի գթութեամբ անծանօթ վշտաց վրայ . . .

Անծանօթ վշտաց վրայ : Ահա՛ դադա-
փարական կատարելութիւն : Անծանօթ վը-
տաց վրայ գթութիւնը՝ քաջածանօթ վշտաց
համար սլարաք եղած գթութեան տեղն ան-
ցած է : Ես այս տեսակ բան մը կարդացած
չէի երբէք . կա՛մ անանուն փրոււոյց խօսք
մ'է , կա՛մ կարեկցութեամբ խեղկատակեալ
նմանութիւն մ'է անարժան բարեկիրթ մար-
դու : Բայց բանաստեղծութեան մէջ ամեն
բան կը չըմեղի , մինչեւ իսկ անխման խօս-
քերն : Զեղծում մ'է այս : Փոյթ չէ . ամե-
նէն գեղեցիկ տողերը կը տգեղնան երբոր
սլարդ ճշմարտութիւնն հակադրի անոնց ,
ինչպէս արեւուն ճառագայթը թատերա-
կան զարդուց :

(Շարունակել)

« Արեւելք » ի 201 թուոյն Օրոսան կեանքի մէջ յիշուած լինելով Միլիւայի « Անկու-մըն Տերեւոյ » բանաստեղծութիւնը, չա-տերը փափաղեցան այս բանաստեղծու-թեան թարգմանութիւնը վերստին տեսնել: Հետեւաբար կ'արտատպենք մի գեղեցիկ թարգմանութիւն զոր ամօք առաջ ըրած է-կամանուէլ Լ. Բէնտի Եսայեան:

ԱՆՆՈՒՄՆ ՏԵՐԵՒՈՅ

Անտառակին աւարաւ

Աշուն-դայուկ արկ զերկրաւ .

Թուփք և մացառք հոլանիք .

Սոխակ չունի դայլայլիկ:

Այն ինչ կենաց յայդուն փայլ .

Մանուկ հիւանդ, յամբաքայլ .

Խաղալի գընալի յերթ վերջին .

Յիւրն անտառակ սերելին:

« Մայրիդ, ո'ղջ կաց . . . ընկճիմ ես ,

Սուգ քո գութէ զիմ աղէտս .

Յամէն անկման սաղարթու .

Դիտեմ զգուշակին մահու:

Եպիտաւրեան պատգամ խիստ

Ասաց . « մայրիդ ոտտախիտ

« Աչացդ հանդէպ դայկացին ,

« Այլ էցէ այն և յետին ,

« Յաւերթ պատի գլխէ նոճին .

« Ի գերեզման տապանին ,

« Գունաթափեալ քան զաշունդ ,

« Անկցի խամբեալ մանկութիւնդ .

« Տախ քան զծագիլին դաշտին ,

« Եւ նախ քան զուռու բլրակին »

Մեռանիմ ես . . . ցրտաշունչք

Եւ թուէք հարին զիս հոգմանք :

Եւ իբր ըստրուէս խուսափուկս

Տեսի զգարունս ի փախուստ:

Անկ'ի'ր, տերն'դ առօրեայ ,

Յաչաց զուգիս զայս սքողէալ ,

Թաքո' յանցլոյն իմ մօրէ .

Զվայրն ուր հանդիպց յայսմ հետէ:

Այլ թ'ի մեկնակ ճեմելին ,

Իմ հերարձակ սիրուհին

Գայ լալ ի մուտս արեգին ,

Զարթո' քո միզմ'ի շրջին

Պահ մի սփոփեալ զիմ ուրուն »:

Ասաց, գընաց անդարձակ . . .

Եւ հուսկ տերեւն որ անկաւ

Ետ զօրհասին նըշանակ:

Եղին Ե հոգ ընդ կապեալ . . .

Այլ չը դարձաւ սիրուհին

Այցել մեկնակ դարձանին .

Հոյիւ դաշտին միայնակ

Երջմ' յածեւ լոկ ոտին:

Ըզըռութիւն տապանին:

Վ Է Պ

ՄԱՏԼԷՆԻ ՄԵՂՔԸ

Գ.

(Շարունակում է Տե. Թէ- 3735)

Այս վիճակը անտանելի էր, և կ'զգայի որ չէր կրնար երկայն տեսել: Ի՛նչ ընելու էր. վհատած էի. ինքզինքս անկարող կը գտնայի Լուիլը ազատելու. բայց իւր եր-ջանկութեան աւերակաց վրայ իմն բարձ-րացնելու մտածութիւնը չ'ունեցայ երբէք. մեր սրտակցութենէն ծագում առած ներքին ուրախութեանց չէքին փշիլը կ'զգայի և չի կրնալով առաջը առնուլ, հաստատաւորու-թեամբ աւերակացը ներքեւ կը թաղէի ինք-զինքս:

Երեկոյ մը երեքնիս ալ սրահն էինք: Լուիլ, յուզեալ և չարատանջ, աթոռակի մը վրայ ձգած ինքզինքը, աշունները դոց, թե-րեւս ժամանակին երկայնութիւնը քնով ա-նըզգալի ընելու գիտմամբ, թերեւս կեղծ-քուն ձեւանալով միայն կը յուսար չուր-ջը գտնուողներուն հաղորդակցութենէն ազատ ըլլալ: Հօրեղբայրս կը կարդար, և ես ասղնադործի մը դբաղած էի ու կը մտածէի: Խոր լուութիւն մը մէջերինս կը տիրէր, երբ ժամը 10-ն ատենները դուռը բացուեցաւ և Բոպէր ներս մտաւ. ես զար-մանքէս ձիջ մը արձակեցի. իսկ Լուիլ ոտք ելաւ ստատիկ յուզեալ, այնպէս որ ինձի եր-կիւղ ազդեց, այնքան վախ և տանջանք քա-չած ըլլալը վրան յայտնի կ'երեւար: Անկա-րելի է բացատրել դէմքին վրայ ցոլացած ուրախութիւնը. չգիտեմ թէ Յայրայի աղ-ջիկը այն աստիճան ցնծութիւն լինացաւ արդեօք, երբ տիրջը ձայնը զինքը մահուան ստուերներէն վերափռեց:

Բոպէր ինձի փոխուած չ'երեւցաւ. իրեն բնական եղող սովորական համարձակու-թեամբը խօսեցաւ, և Լուիլն առ ինքն ուղ-ղեալ յանդիմանութեանց՝ պարզութեամբ պատասխանելով « Հիւանդ էի, կը տանջուէի, սիրուն Լուիլս, բայց անցաւ բոլորովին » . այսուհետեւ երբէք չախտի թողում գլեզ, և ժպտելով անոր գողտրիկ մատանց ծայրը համբուրեց:

Առջի բերան հորեղբայրս՝ չառ ցրտու-
թեամբ ընդ ունեց զինքը, բայց իւր գաւկիւն
զուարթադէմ այլ յայլմէ վնեղը տեսնելով,
քէն չկրցաւ պահել ընդ երկար: Խեղճ և սի-
րուն Լուիզ, չափազանց սիրելուն՝ կեղծել
չէր կրնար դիտնալ, և ոչ իսկ մտքէն ան-
ցաւ: Բոպէր վերադառնալուն պէս՝ քաջաճ-
ները մոռցաւ, և ըստ սովորականին՝ ուրախ
զուարթ և անուշիկ երեցաւ: Զանոնք միասին
տեսնողը՝ նախորդ օրը իրարմէ մեկնէր և
կ'ըսէր, և չէր կրնար կարծել թէ տարօր-
նակ անցք մը մէջերնին տեղի ունեցած ը-
լայ: Ընտանեբար անցաւ այդ երեկոյն, յար
և նման ուրիշ չառ անդամուաններուն. սա
տարբերութեամբ միայն որ՝ մեր կորուսեալ
կարծած երջանկութիւննիս՝ վերաստացեր
էինք:

Այդ իրիկունէ ետքը Բոպէր՝ առջինին
պէս չարունակեց գալ. ամեն բան նախ-
կին ընթացքը առաւ, և այդ ցաւագին օ-
րերը չեղածի պէս եղան. մինչեւ իսկ ին-
ձի կը թուէր թէ Բոպէր առջինէն աւելի զը-
ւարթ և հաղորդական ձեւ մ'առած էր.
կը դիտէր զինքը և չէի կրնար որոշել թէ՛
ուրախանալ՝ պէտք է թէ վախնալ: Առաջին
անգամոր առանձին գտնուեցանք «Իրաւունք
ունիս, ըսաւ, ցնարքի մը ետեւէն կը վազէի,
բայց ամէն բան լնցաւ, բողբոլիւն լնցաւ,
կ'երդնումքեզի: Վայրկեան մը մտքէս անցու-
ցի՝ փախչիլ, այլ յետոյ, մեկնելուս պահուն,
միտքս եկաւ որ, քեզմով ինձի սիրելի եղած
Ֆրանսայի մէջ քենէ վատ բան մ'ալ կար որ
զիս կ'արդեւոր: Այսուհետեւ կեանքս կապ-
ուած է Լուիզի, քու և այն ամեն էից և
զգացմանց հետ զորոնք հոս ձանձցայ, և
կամ հոս արթնցան ի յիս, զորոնք այլ ևս
անկարելի է կարենամ գտնել. . . նստակե-
րդ ձեռքս հասան, և կ'օրհնեմ զանոնք.
վասնզի աչուքներս բացին: Այո՛, պիտի սի-
րեմ զԼուիզ, և արդէն իսկ կը սիրեմ. միթէ
անզգայ և մեղապարտ չեմ ըլլար եթէ թո-
ղում ու փախչիմ այդ սիրուն էակը, այդ
անբիժ հոգին, որուն սրտին խորը որքան
թափանցեմ, օտար ստուերի մը հետքը ան-
գամ չտեսնելուս ապահով եմ: Ծնորհակալ
եմ, Մատչէն, դու զիս լուսաւորեցիր, ամեն
բան անկեղծութեամբ ինձի հաղորդեցիր,
սուանց չինձու պարկեշտութեան աղիւս սիրտ
մ'ունիս, և ես ամեն ժամանակ քեզի անձ-

նուէր ու գրեզ միշտ յարգող եղբայր մը պի-
տի ըլլամ»:

Այս յետին խօսքերը յատկապէս շեշ-
տելով ըսաւ՝ ասպագային համար զիս ասպա-
հովցնելու և զանցեալը ջնջելու մասնաւոր
դիտմամբ: — Այդ հաւատամքեզի, ըսի ձեռ-
քս իրեն երկնցնելով:

Նոյն երեկոյին՝ պաշտօնական կերպով
Լուիզը իրեն ամուսնութեան խնդրեց:

Գ.

Ձեմ ուզեր երկարել յաջորդ օրերուն վը-
րայ, մէկ կողմանէ օժտի պատրաստութիւն-
ները, փեսին կողմանէ հարսին տրուելիք
ստպատ զարդուց և հանդերձանաց՝ որոնց
ընտրութիւնը ինձի յանձնուեցաւ, որք չա-
րունակ ինձի պատճառ և պատրուակ կ'ը-
լային բացակայ լինելու, և երկուքը առան-
ձին թողլու: Ես ինքնին կը հսկէի իրենց
աւագաստը տեղաւորելու, և ի շնորհս ա-
ռատածեւութեան հորեղբորս, իրենց չը-
քեղ և վայելուչ բոյն մը յարգարեցի. հան-
գերձ այնու՝ ոչ ինչ ուղածիս չափ գեղեցիկ,
կատարեալ ձեւօք և ներդաշնակ գոյներով
կ'երեւար ինձի:

Քանի մ'անգամ սակայն պատահեցաւ,
քանի որ գործաւորները շուրջս աշխատելով
իմ հրամաններս կը կատարէին, յանկարծ
աչուքներս արցունքով լեցուեցան: Շատ ան-
գամ նաեւ, օրուան աշխատութենէն յոգ-
նած, երբ կ'երթայի հանգչելու Լուիզին, և
Բոպէրին քով, ցաւօք հանդերձ սրտի ճըզ-
մուիլ մը կ'իմանայի վերահաս տեսնելով զի-
րենք գլուխ գլխի տուած, անուշիկ կերպով
իրարու մօտեցած և կամացուկ ձայնով սըր-
տէ սիրտ խօսակից: Եւ սակայն Բոպէր,
իրաւ է որ չափազանց սիրահարութիւն մը
չէր կեղծեր զոր անշուշտ դեռ չէր զգար.
բայց ամենայն կերպով կարեկից և ներողա-
մատ զգացմամբ վրան կը դուրգուրար: Լուիզ
այնչափով երջանիկ էր, իր անմեղութեանը
մէջ չէր գիտեր թէ սէրը ուրիշ նայուածք-
ներ և ուրիշ լեզու մը կրնայ ունենալ: Ես
ամէն Զանք կ'ընէի զսպելու մերթ ընդ մերթ
քաջութիւնս վտանդի ենթարկող յետադարձ
տկարութեանս յարձակունքները՝ զոր ինք-
զինքն սանդամ կ'ուզէի ծածկել. իմ և Բո-
պէրին մէջ անցած դացածը մոռցուեցաւ,

մեր յարաբերութիւնները պարզ էին և սխալներ :

Ամուսնութիւնը յուլիս 20 ին որոշուած էր . յամենայն սրտէ կը կոչէի այդ ժամը՝ անդարման եղելութեան առջեւ յուսալով հանգիստս գտնել : Այդ օրը վերջապէս հասաւ . ես ինքս հազուեցուցի Լուիզը, իւր հարսանեկան շղապտեռով վարդ արեցի զինքը, և գլխուն վրայ դրի ձերմակ պսակը . երբէք զնա այնքան գեղեցիկ չէի տեսած :

Նկեղեցի գնացինք . արարողութիւնը կատարուած պահուն՝ զգացածս պատմելու չլիտի աշխատիմ . այդ ցաւերը բացատրել մարդկային գրչի կարողութենէն վեր է : Տեսակ մը յափշտակութիւն, որ մինչեւ այն ատեն ինձի ուժ և զօրութիւն էր եղած, թողուց զիս յանկարծ և ահաւոր էականութեան դէմ առ դէմ գտայ ինքս ինքս : Բոսպէր հոն էր, իմ դիմացս . կը սիրէի զինքը և ինձի համար կորսուած էր . իր հանդարտութիւնը, իւր անխռով և հպարտ ճակատով՝ կիրքս կը բերէր . դոնէ տարակուսանաց հետք մը, ցաւոց ստուեր մը վրան նշմարէի : Լուիզին դէմ կ'զգարէի որ չկրցաւ գուշակել իրեն համար քաջածս . զաշխարհ ամեն կը մեղադրէի : Կըսէի ինքնիրենս թէ՛ երկինք թող չալտի տան որ այդ սիրտի ամուսնութիւն մը կատարուի, և ինձ օգնական կը կոչէի աստուածային շանթը : Ի ծուռ իշեալ, գլուխս երկու ձեռքովս ծածկած, կը կարծէի թէ կ'ազօթեմ, քանի որ ամեն զգացմունքներս ոտք ելած՝ կը բողբոջէին : Նւսակայն ամուսնութեան արարողութիւնը կատարուեցաւ ընդհանուրին ցնծութեամբ և քահանային օրհնութեամբ : Աստուած չը միջամտեց արդիւեւր, արեւը շարունակեց իւր ճառագայթները մեր վրայ զեղլու ամենայն առատութեամբ, և ո՛չ որ կատկածեցաւ իմ յուսահատութեանս վրայ :

Օրուան մնացորդը՝ երեկոյեան պարտահանգիսին պատրաստութիւններովը անցաւ . թէեւ եղանակը յառաջացած էր, Լուիզ փափաքելով իւր ամեն բարեկամուհիները շուրջը բոլորել՝ հրաւիրեալք բազմաթիւ էին . սպարանքն ու պարտէզը չբեղ կերպով լուսաւորուած էին : Լուիզ իւր դոհարեղիկաց մէջ դերբնական պայծառութեամբ կը շողջար, նայուածքը և ժպիտը կը փայլատակէին : Այդ հանդէսին յիշատակը բոլորովին

խառնաշփոթ միտքս կուգայ . վասն զի ես առանց տեսնելու, առանց մտածելու, դիւերաշքիկի պէս խմբեակներու մէջ կը դեգերէի, անտանելի գլխու ծանրութիւն մը վրաս ունենալով :

Պարահանդիսին վերջերը՝ անձկարեկ, քաշուեցայ ներքին սենեկին մէջ անկիւնը, մի եւ նոյն սենեակին՝ ուր Բօպէր երեկոյ մը իւր սէրը ինձ յայտնած էր, և հոն, առանձին, կէս ծածկուած խոշոր ծաղկամաններով, մոռցուած ամենէն, հանդիսին աղմուկայից ձայներէն, աչքիս առջեւ բերի այդ կարճատեւ և աղետարեր տեսարանը : Ի՛նչ անտի յուսով վայրկեան մը հողիս սրարբեցաւ : Իրա՞ւ էր ուրեմն թէ ամեն բան կորսուած էր, և անդառնալի կերպիւ, ու իմ հաւանութեամբս : Գլուխս կը կորսնցնէի . շուրջս գտնուած ամեն բան ինձի սգազգեսանց կ'երեւար, և լաւէ եղանակը որ զուարթ ամուսնի աւէժուփ իւր յորձանաց մէջ կը յափշտակէր՝ հիւանդ ախտն զերեզմանական նուազի մը պէս կը հնչէր . երակներս ուժգնութեամբ կը նետէին, և կը կարծէի լուսել դանչիւն զանգակաց : Աչացս վրայ թանձր մածեալ ամպին մեջէն՝ նշմարեցի հօրեղբայրս որ զիս կը փնտռէր . ճիգ մ'ըրի դէպի իրեն երթալու, բայց չի կրցի ոտք ելնել, և պարտաւորեցայ թեւին վրայ յենուլ կանգուն կենալու համար : — Ի՛նչ ունիս, աղիւ աղջիկս, ինձի ըսաւ գուրդուրալով, անհանդիստ կ'երեւաս . . . անշուշտ յոգնութենէ՞ք, այնպէս չէ՞ :

— Այո՛, անտարակոյս, յոգնութենէ, միմուսցի առանց ըսածս գիտնալու :

— Պէտք է երթաս հանգչիս, իմ խեղճ Մատչէնս, կենալու կարողութիւն չունիս՝ այս տաժանելի օրն ալ վերջապէս անցաւ, փառք Աստուծոյ . կարգը եկաւ զբեղ գոհացնելու, և շատ իսկ . ա՛յնչափ աշխատեցար, ամեն բան կատարելապէս և սքանչելի կերպով կարգադրեցիր . . . Աստուած պիտի օրհնէ զբեղ զաւակս, և քու ծեր հօրեղբայրդ՝ իւր կեանքը զբեղ երջանիկ ընելու պիտի ջանայ :

Մեռնէի պիտի, կարծես : — Մտիկ ըրէի, աղջիկս, ըսաւ ձայնը իջեցնելով, Լուիզն ալ շատ յոգնած է, խեղճ աղջիկը . գնա՛, իմ բարի Մատչէնս, անդամ մը ես իր կորսնցուցած մօրը տեղը բռնելու : Տա՛ր, հանգչեցու զինքը իւր սենեակը :

Կարողութենէս վեր եղաւ պատասխանելը՝ բայց ոչ թէ հնազանդելը։ Կոչեցի Լուիզը և իւր առագաստին սեմոց վրայ մշնելու առաջնորդեցի իրեն։ Բայց հոն անյաղթելի զօրութիւն մը զիս կասեցուց։ Ուզեցի որ ինքը միայն մտնէ այդ արքայութեան մէջ՝ ուր ինքը առանձին պէտք էր թագաւորել, և ինչէ բան մը չկարենայ հոն թափանցել, և ոչ իսկ ծաղիկ փունջէս ծաւաղող անուշահոտութիւնը։ Համբուրեցի զինքը ու սենեակս փախայ և հոն անզգայ ինկայ մնացի։

Նոյն գիշերը, ծանր հիւանդութիւն մը վրաս եկաւ, և շարթներով մահու եւ կենաց մէջ տարութեբեալ մնացի։ Գրեթէ անդադար կը զառանցէի, և մերթ ընդ մերթ խելքս գլուխս եկած միջոցներուն՝ մի գուցէ գաղտնիքս մատնած ըլլամ, վախով կը լկուէի։ Հօրեղբայրս և Լուիզ զիս բնաւ չէին թողուր։ ճգնաժամերս անցած պահուն՝ զիրենք միշտ գլխուս վերեւը կը գտնէի, հիւանդութեանս նշանները հետապօտելու մըտադիր։ Երկու երեք անգամ ալ ինձի այնպէս երեւցաւ որ Բոպէրն ալ հոն էր։ Ինքզինքիս եկած ժամանակս, երբ իրենց անդադար խռովեալ աչքերը խփններուս յառեալ կը տեսնէի՝ փոխանակ երախտագէտ ըլլալու, կը զայրանայի և քունիս զառանցանացս մէջ անգամ այդպիսի խոտ գիտողութեան մը ենթարկեալ ըլլալուս։ Շուրջս գտնուողներուն ոչ ցաւը, ոչ արցունքը սիրտս կը շարժէին, առանց զիս յուզելու վտանգի մէջ ըլլալու՝ ապացոյց էին։ Կը տեսնէի քայլ առ քայլ մահուան մօտենալը՝ ոչ ցաւ և ոչ հաճոյք զգալով։ Մօտալուտ կորստեան առջեւ, ուրիշ մտածութիւն չունէի՝ բայց եթէ այն թէ կը սիրէի զԲոպէր, և թէ յաւիտեան պէտք էր ծածկել զայդ։

Հիւանդութիւնս մեղմացաւ, բայց ցնորած միջոցներուս գաղտնիքս յայտնուած ըլլալուս երկիւղը՝ ինձի համալ անտանելի էր։ Հարցութեամբ կ'ընէի շուրջս գտնուողները, կը զիտէի մասնաւորապէս հօրեղբայրս և Լուիզը՝ յուսալով իրենց գէմբին վրայ անսովոր բացատրութիւն մը, յայտարար նշան մը գտնել ուղածիս։ Արիւն և կրկին կը վերադառնայի իմ հետապօտութեանցս՝ մենամոններու յատուկ եղող յորատեւութեամբ և խորամանկութեամբ։ Ձէին հասկնար տա-

րօրինակ հարցմանցս պատճառը, և առանց դժկամակեւոյ՝ ամենայն սիրով կը պատասխանէին ինձի, տենդը լոկ պատճառ բռնելով մտային կարողութեանցս խանգարման։ Արշալի որ ջանացի զիրենք ի միասին կամ առանձին հարցափորձել, իրենց պատասխանները յեղաշրջել, հազարումէկ ճանբով՝ յանկարծակիի բերելով զիրենք, բերներնուն խօսք մ'առնուլ իմ գաղտնեացս նկատմամբ, բան մը չկրցի հասկնալ և կամաց կամաց սխալ ապահովալ։ Այդ համոզումը առողջութեան դարձս փութացուց։ Նոր կենաց վերադարձի անուշութիւնը, այդ անբաղդատելի գոհութեան, վիճակը զոր անճողոպրելի մահուան ճիրաններէն ազատեալք միայն կարող են գիտնալ, գրաւեց զիս ուրեմն։ Հազիւ թէ ոտք ելայ, բժիշկները խորհուրդ տուին զիս գիւղ տանելու։

Սեպտեմբեր ամիսը հասեր էինք. գեղեցիկ և տաքուկ օր մ'էր՝ Վիլքէրնի գնացիւք։ Հօրեղբայրս վախճալով որ չի հոգնիմ, չուզեց երկաթուղիով երթանք, այլ զիս, Լուիզին հետ, թեթեւ կառքով մը զրկեց։ Ինք՝ զբաղմանց պատճառաւ՝ երկրորդ օրը պիտի դար զմեզ գտնէր։ Բոպէր կանխեց առաւօտուն. երեկոյին, ժամը եօթին, մեր հասած ժամանակը, վերնագաւթին վրայ մեզի կ'սպասէր։ Կառքէն իջնելու ինձ օգնեց, և իմ սենեակներս առաջնորդեց ինձ։ Իւր հրամանաւը սեղանը դրեր էին իմ պառկելու սենեկիս կից աշխատութեան փոքրիկ դահլճին մէջ։ Բազմաթիւ ճրագները վառուած գեղեցիկ աշտանակներու վրայ՝ հանդիսաւոր օրուան մը կերպարանք կուտային այդ սենեակներուն։ Դիտեցի որ ծաղկամանները՝ մասնաւորապէս իմ ախորժած ծաղիկներովս լեցուցեր էին, և իմ սիրած գիրքերս գահաւորակիս մօտ, սեղանատախտակի մը վրայ դրուած էին։ Ընթրիքը բերին։ Բոպէր և Լուիզ սպասաւորները դուրս հանեցին և անձամբ ինձ ծառայելու հաճոյք կ'զգային, ամեն փափաքս գոհացնելու ուշադիր՝ և ո'չ իսկ շարժումներ մ'ընելու յոգնութիւնը թողլով ինձ։ Այդ երեկոյն՝ յիշածներուս մէջ ամենէն գեղեցիկներէն մէկն է։ Այնպէս որ չէի կրնար իմ երկու բարեկամներէս հրաժարիլ ու երթալ հանգիւ երես տուած աղու մը պէս կը սպառաքէի և թող չէի տար որ քովս մեկնան։ Լուի-

զին կը յառէի, հաղար ու մէկ պատրուակ կ'ստեղծէի իրարմէ չզատուելու համար, բայց վերջնապէս հարկ եղաւ բաժնուել:

Շատ շաբաթներ անցան հեշտալի թուլութեան վիճակի մը մէջ. անձնական տկարութիւնս՝ խորհելու և յիշելու կարողութիւններս չէր թողած. բայց տակաւ առ տակաւ ուժս սկսաւ դալ. միանգամայն և դառն զգացում մը իմ էութեանս ալ իւր հետը: Ս'սայ դիտել. բնականաբար ուշադրութեանս առաջին առարկան եղան Լուիզ և Րոպէր. երկուքն ալ կատարելապէս երջանիկ թուեցան ինձ: Չանացի որ անով ուրախանամ, բայց շատ անգամ դառն վհատութեան հետ միջիլ հարկ եղաւ, այնպէս որ ես ինքզինքս ծանրութեան մը պէս զգացի:

Այս վիճակին մէջ Փարիզ վերադարձայ: Լուիզ և Րոպէր, երկուքն ալ երիտասարդ և գեղեցիկ, բարձր ակնբոց մէջ փնտռուեցան ու փայլեցան. ամեն իրիկուն նորանոր զուարճութիւնք կը յափշտակէին զիրենք ընտանեաց գրկէն: Աւելի բերան ուղեցի իրենց հետեւիլ, բայց այդ բաղմաշուկ և վերջնապէս սովորական դարձած կենաց ձեւը՝ փոխանակ զիս սթափեցնելու, սկսաւ յոգնեցնել. քիչ ատենէն հրաժարեցայ, առողջութեանս տկար վիճակը առարկելով. և քանի որ Լուիզ իւր ամուսնոյն հետ նորանոր հանդէսներու մէջ կը ցոլանային, ես հօրեղբօրս կ'ընկերէի: Այնպէս յարատեւ ներանձնացեալ՝ ձմեռուան երկայն գիշերները, աղետալի վիճակս դիտելով անցուցի: Առողջութեանս ակներեւ խանգարիլը չուրջըս գտնուողներուն մտատանջութիւն պատճառեց. իրենց հոգն ու խնամք կրկնապատկեցին, բայց չարին աղբիւրը խորանոյլ և անձանօթ մնացած ըլլալով իրենցմէ, հետեւաբար ջանքերնին սուարդիւն եղաւ:

Փարուհն երեւցաւ, հանգիսից սրահները մի առ մի փակուեցան. դաշարագուարձ գիւղօրայք նորէն հրաւիրեցին իրենց յեղեղուկ հիւրերը. ես միայն չփոխուեցայ: Արթիկս կուգայի ժիրաժիր, կը խնդայի նաեւ, բայց ինչպէս որ կ'ըսեն՝ հողիս տուեր, դաղրուկ կ'ապրէի: Քանի որ ուժս բնականէն կտրուէս տեղը կուգար՝ անուշահոտ և խնկաբոյր գաշտորայից խաղաղ կեանքին մէջ պայծառ և մաքուր օդը շնչելով, բարոյա-

կան մասին արագ արագ կը հիւժէր՝ թաքուն և միակ մտածութեանս հետ ողորելով:

Անձնասիրական ձխտումներ կ'սկսէին խլրտել ի յիս՝ օրէ օր աւելի տկար ընդ զխուժիւն գտնելով, և առանց գիտնալու՝ բարձր կամքըս ի յոռին կը դարձնէին: Նս որ լռելեայն մատուցած զոհիս՝ այնքան յիմարաբար հաւանութիւն տուեր էի, արդ վատութեամբ ցաւ կ'զգայի, կը զղջայի գրեթէ. միմայն հպարտութիւնս կը մնար դեռ, և երբ ըզգացի որ անոր ալ զիս մատնելու կարգը հասեր է՝ այն ժամանակն է որ սոսկմամբ խելամուտ եղայ թէ քայլ առ քայլ ինչ աստիճան բարոյական նուազութեան իջած եմ եղեր:

Օր մը Լուիզի և Րոպէրի հետ ընկերութեամբ ձիով երկար շրջադայութիւն մը ըրեր էի և կամաց կամաց ետ կը դառնայինք: Իրենք փոքրիկ հեռաւորութեամբ մը առջեւէս կ'երթային: Երկար ժամանակէ ի վեր միտքս զրեր էր թէ Րոպէր՝ պահ մը զիս սիրել կարծելէն վերջը՝ ինձի համար մասնաւոր հախառակութիւն մը կը տածէր. կը նրկատի որ ինչ կը փախչէր: Շատ անգամ այնպիսի մտայլ և ազդու նայուածքով մի զիս դիտելուն վերահաս եղած էր՝ որ սուկացեր էի. բայց անմիջապէս աչքը դարձուցեր էր: Ուրիշ կողմանէ իւր կնոջ հետ աւելի գողտրիկ, աւելի խանդակալի, աւելի վրան գուրգուրալու ձեւ մը կը նշմարէի: Անոր համար գիտմամբ էր որ ետ մընացեր էի, ինք որչափ ինչ փախչելու՝ նոյնչափ ալ ես իրմէ զգուշանալու ջանալով: Պարտէզը չմտած, երկաթուղոյն վրայ շատ բարձրէն նետուած և սաստիկ զառւիւր փոքրիկ կամրջի մը վրայէն անցնիլ հարկ էր. Րոպէր և Լուիզ հապիւ թէ անցեր էրն, կարող ընծի եկեր էր, երբ ձիս չոգեկառքին ուժգին սուլելու ձայնէն թերեւս խրոչելով՝ յանկարծ զարտուղեցաւ. ջանացի հնազանդեցնել և ճանքու բերել, բայց երկու ոտից վրայ կանգնեցաւ՝ կամուրջին եզերքը քաշուած սլատին վրայ տապալելով, և ես ալ անշուշտ դահալվթ լինելու վտանդի մէջ էի, երբ Րոպէր վաղեց ու սանձէն բռնեց և հաստատուն ձեռքով անխախտ կասեցուց: Այդ վայրկեանն իր կերպարանքը արտաքին կարգի տպաւորութիւն մ'ըրաւ վրաս. գոյ-

նը նետեր էր, և կարծես չրթունքները բարկութենէն կը դուլային: — Յիրաւի, ըստ նա յանկարծակի խտուրթեամբ, կարծես թէ ինքզինքդ սպաննել կ'ուզես և հաճոյք մը կ'զգաս քեզի համար, զմեզ դող հանելով:

Առանց սպառախանելու բարկաճայթ մտրակեցի ձիս, և ընդոտտ անցայ կամուրջէն: Լուիզ, տհաքեկ, անշարժ կ'սպասէր և քաղցրութեամբ մը անխոհմտութիւնս յանդիմանեց: Քիչ մը անհամբերութեամբ — Տղայ ես, ըսի իրեն, միթէ երբէք ինկած եմ, ուրիշի՛ն թող այդ ծաղրական վախերը: Բոսլէր լսեց այս խօսքերս, բայց երես չեկաւ և լռիկ մնջիկ ամրոցը դարձանք:


(Շարունակէ)

ԲՕԼ ԱԼՊԱՆ

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ


ԳՐԵԼՈՒ ՆՈՐ ԵՂԱՆԱԿ ՄԸ

Դիտարին է մաքուր գիր գրել ձեռքն ուղիղ բռնելով, առանց թուղթին վրայ հանդչելու, և առանց մատերուն ազեղ ձև մը տալու: Այս սպառնաւ Պ. Պէրլման ամերիկացին հնարեց ԴԵ մետաղեայ գլան մը (պատկ. Ա.) որ Բ և Գ օղակներով հաստատուած է ձեռաց մէջ, երկու մատերուն անցած մատանիներու վրայ:



Պատկեր Ա.

Այս յաւելմամբ (պատկ. Բ.) տեսնուածին նման գրիչը բռնելով Դ և գլանին Դ ծայրը թուղթին վրայ կը կռթնի և կարելի



Պատկեր Բ.

կըլայ գրել առանց քրտնած ձեռքով թուղթին աղտոտելու եւ միանգամայն առանց յոգնելու:

Պ. Պէրլմանի գլխաւոր մեծ օգտակարութիւն ունի, որովհետեւ կտրուի մատերուն լաւ գիրը մը տալ և անհրաժեշտ է նորաւարտից համար: Ի սկզբան դուցէ դժուարութիւն զգայ զայս գործածողը, սակայն վարժութիւնն ստանալէ վերջ գործածութիւնը կը դիւրանայ:

ՔԱՂՈՒԱԾ

ՇԱՔԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ

1-6 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԱՐՏԱՔԻՆ

Երից կայսերաց տեսակցութիւնը տեղի ունեցաւ սեպտեմբեր 3/15 ին ի Սքիերնի վիճէ (վարչավիայ մօտ) մեծ հանդիսիւ եւ յոյժ սիրալիր եղաւ: Պերլինի լրագիրք կարծիք կը յայտնեն թէ այս տեսակցութիւն պիտի նպաստէ խաղաղութեան պահպանման: Յաջորդ օրը, երից կայսերաց որսի զբաղած միջոցին, Պիլմարք իլխանը, Գալնոքի կոմսն և Պ. Կիրս երկար խորհրդակցութիւն մ'ունեցան ի միասին:

— Վերջին թղթաբերը չձանուցաներ նոր գործողութիւն մը փրանքօչինական սպառնալիքին վրայ: Յամաքի կողմէ Զինացեաց հռչակաւոր արշաւանքն ի Թոնքին տեղի չունեցաւ դեռ: Պըրլէն տը Լիլ զօրավարն ա-

նոնց կը սպասէ սահմանադրւոյն վրայ : Զինաստանի արտաքին գործոց խորհրդին վեց անդամք պաշտօնանկ եղեր են , որովհետեւ Ֆրանսայի հետ հաշտութիւն կնքել կ'առաջարկէին : Բեքինի կառավարութիւնը խիստ միջոցներ կը սպառնայ ի գործ դնել իւր այն պաշտօնատարաց դէմ որք Ֆրանսացւոց պահանջած պատերազմական տուգանքը վճարել յանձնարարելու անխոհմտութիւնն ունենան :

Քուրպէ ծովակալը կը կենայ միշտ Մացուլի դիմաց , ուստից կը հոգայ իւր նաւատորմի պէտքերը : Պ. Ժիւլ Ֆէրրի Բարիզ վերադարձաւ սեպտ. 11ին , և սեպտ. 13ին նախարարաց խորհուրդը պիտի գումարէր նոր ուղղութիւն մը տալու համար չինական պատերազմին : Կ'ըսուի թէ Ֆրանսայէն նոր դորք ճամբայ պիտի հանուի և Խորհրդարանն ի նիստ պիտի հրաւիրուի պատերազմի հրատարակութիւնն արտօնելու :

Իսկ երէկ հասած հեռագիրք կը ծանուցանեն թէ երկու հազար Ֆրանսական զօրքեր ցամաք ելան Քիմբայի անցքին եղերաց վրայ , ի մուտս Մին գետոյ , Ֆու-Չէուի նահանգին Մինի-Չինի քաղաքին հիւսիսային աբեւելեան կողմը : Ֆրանսացիք անմիջապէս յարձակեցան հոն հաստատուած չինացի զօրաց վրայ : Ամենածանր կռուէ մը յետոյ , յաղթութիւնը մնաց Ֆրանսացւոց , և չինացիք ի փախուստ դարձան , մեծ կորուստներ կրելով :

Չինական զօրքերն այժմ բոլոր գծին վրայ կը նահանջեն :

— Ընդհանուր տեղեկութիւններ կը հաստատեն թէ քուերան աննշան կերպով միայն կը ճարտիկ Ֆրանսայի հարաւակողմը , թէ թեթեւ կերպով միայն աճած է յՍ զանիա , և թէ զգալապէս կը նուազի ի Նարուի , ուր վերջին 24 ժամու մէջ 161 հոգի միայն մեռած են քուերայէ :

— Իտալիոյ արտաքին գործոց նախարար Պ. Մանչինի տէրութեանց ուշադրութիւնն հրաւիրեց առողջապահական օրինադրի մը և շնդկաստանէն եկող նաւուց համար Կարմիր ծովուն բերանը մաքրանոցներ հաստատելու ստիպողականութեան վրայ :

— Սեպտ. 17ին քուերայի կառկածելի դէպք մը պատահեցաւ նաև յՕրան (Ճէզպայր) :

— Պրուսէի տնդլիական ղեսպան Սըր

Էտուարդ Մէլէթ Պերլինի անդլիական դեսպան անուանեցաւ վախճանեալ ըրտ Ամբթիլի տեղ : Պ. Մէլէթ երբեմն Կ. Պոլսոյ անդլիական ղեսպանատան քարտուղար և գործակատար եղած է , և անդլ. ղեսպանատան կողմէ Հալէպ ղրկուեցաւ Զէյթունի վերջին խնդրոյն առթիւ : Յետոյ Եգիպտոսի մէջ քաղաքական գործակատար անուանելով , բաւական ժամանակ վարեց այս պաշտօնն և անտի Պրուսէի անդլիական դեսպանութեան կոչուեցաւ :

— Անդլիական Բարձր Գովիսէր Լորտ Նորդպրուք սեպտ. 9ին Ալեքսանդրիա հասաւ , Լորտ Ուոլսլի և Սըր Էվլին Պէյրիսկի հետ . Նուպար փաշա յանուն Խտիվին ընդունեց երկու Լորտերը : Լորտ Նորդպրուք յաջորդ. օրը Խտիվին մատոյց Լորտ Կրանփիլի գիրն որով Բարձր Գովիսէր կը կարգուի : Այս դրով արտաքին գործոց նախարարն եգիպտական կառավարութեան աջակցութիւնը կը խնդրէ առկա կարեւոր խնդրոց , մանաւանդ ելմտական դժուարութեանց լուծման համար : Խտիվն յոյժ գոհ եղեր է Լորտ Նորդպրուքի յայտարարութիւններէն , և ապա փոխադարձ այցելութիւն տուեր է նախ :

Տոնկուայի կառավարիչը կը հեռագրէ թէ Մէլէթի կուսակցաց սառնարաթիւ խումբ մը Եգիպտացւոց կողմէ դարձեալ պարտութիւն մը կրեց մերձ յԱմպուքոֆ և ծանր կորուստներ ունեցաւ : Կառավարիչը կը յուսայ Տոնկուա վերադառնալ ի մօտոյ : Գահիրէէ կը հեռագրուի սեպտ. 11 թուով թէ անդլիական զօրքերը կը շարունակեն երթալ դէպի Վերին Նեղոս :

— Անդլիական նախարարութիւնը դիտում ունի իմօտոյ եւրոպական տէրութեանց ծրագիր մը մատուցանել , վասն վճարման Ալեքսանդրիոյ հատուցմանց : Անդլիա պիտի հրաւիրէ պահանջատէրերն , ընտրել սա երկու դրութեանց մին՝ 1. Համալգային յանձնած ողովոյ որոշած գումարներուն վճարումը 100ին 25 զեղչով մը , կամ 2. Ամբողջ գումարին վճարումը գանազան պայմանաժամեւրով 10 տարւոյ մէջ :

— Տէյի թէլէգրաֆ լրագրոյ Գահիրէի թղթակիցը կը ծանուցանէ թէ Պէրպէր քաղաքէ նամակ մ'առնուած է օգոստ. 5 թըւով , որ տեղեկութիւն կուտայ քաղաքին

Սուտ Մարդարէի մարդոց կողմէ գրաւման վրայ : 6000 ապստամբք մասնակցեր են յարձակման , որ տեւեր է 5 օր : Բոլոր Պաշտօնականները ցլետին մարդ մեռեր են զէն ի ձեռին , մինչ եղիպտական կանոնաւոր զօրքերը փախեր կամ անձնատուր եղեր են : Ապստամբք անձնատուր եղած զօրաց կեանքին չեն խնայեր և սոսկալի ջարդ մ'ըրեր են քաղաքին մէջ զոր մեծագոյն մասամբ հրկիղեր են ապա :

— Զարը Վարչաւիա հասաւ սեպտ. 8 ի երկուշաբթի առաւօտուն : Կայարանն ու քաղաքը շքեղապէս զարդարուած էին : Քաղաքին կողմէ պատգամաւորութիւն մը ներկայացաւ բարի գալուստ մաղթելու : Կայսրն ուրախութեամբ ընդունեց հացի և աղի աւանդական նուէրը զոր կը մատուցանէր պատգամաւորութիւնը : Ն. Վեհափառութիւնը շոգեկառքէն ելնելով , բաց կառք մը մտաւ , առանց զինուորական հետևորդներ առնելու : Կայսրուհւոյն հետ Մեծ դքսերն ալ կընկերանային Զարին : Հետևորդաց մէջ կը տեսնուէին Պ. Կիրս , Կոմս. Դիպլոմատ , Տոկորուքի իշխանն , նախարարը և զօրավարը : Նախ Մայր Եկեղեցի գնացին , ապա Կաթողիկոսաց եկեղեցին և խաչն համբուրեցին յարգելով բոլորնիացւոց զգացումներն , որք Կաթողիկ են : Ապա Մոքսդաֆի դաշտին վրայ 80,000 զինուորաց հանդէս մը կատարեցաւ , և դիշերը շքեղ լուսավառութիւնք եղան : Հետեւեալ օրն , սեպտ. 9 , Կայսրը պաշտօնական ընդունելութիւն ըրաւ Լալէնսքի պալատին մէջ : Նոյն երեկոյ Կուրքօ զօրավարը պարահանդէս մը տուաւ ի պատիւ կայսերական գերդաստանին : Կէս գիշերուն ընթրիք մը տրուեցաւ Գահոյից սրահին մէջ : Կայսերական սեղանը զարդարուած էր յատկապէս Այգէնպախէ բերուած 8000 վարդերով :

Զարին ի Բոլոնիա այցելութեան քաղաքական հետեւանաց վրայ խօսելով , Վարչաւիայէն քաջուած հեռագրեր զրոյց մը կը յիշեն թէ Ն. Վեհափառութիւն գիտաւորութիւն ունի մօտերս թագ դնելու իբրեւ թագաւոր Բոլոնիոյ և թէ իւր ի Վարչաւիա ուղեւորութեան նպատակն է այս նկատմամբ բոլորնիացւոց տրամադրութիւններն իմանալ : Ուրիշ հեռագիր մ'ալ կ'ըսէ թէ Զարը պիտի վերահաստատէ Բոլոնիոյ Պե-

տական խորհուրդն , այսպէս աստիճան մը ինքնօրինութիւն տալով բոլորնիական ազգին , բայց այժմէն կարելի չէ հաւատ ընծայել այս զրոյցներու :

Ն Ե Ր Ք Ի Ն

Անգլիական նախորդ դեսպան և Հընդկաստանի նորընտիր փոխադրայ Լորտ Տըֆրին , անցեալ շաբթու պատիւ ունեցաւ Վեհ. Սուլթանին ներկայանալ իւր հրաժեշտի ողջոյնը մատուցանելու համար և սիրալիր ընդունելութիւն գտաւ Ն. Վեհափառութեան կողմէ : Վսեմ Լորտն յաջորդօրէրը դանազան հրաւերներու պատասխանեց , պաշտօնական այցելութիւններ տուաւ և ընդունեց , և երեքշաբթի մեկնեցաւ : Անգլիական հպատակաց երեսելիք , դեսպանք եւ բազմաթիւ բարեկամք յուղարկ գնացին Ն. Վսեմութեան մինչեւ շոգեհաւ :

Այս առթիւ Վեհ. Սուլթանն աբամանդազարդ ճոխ մանեակ մը նուէր զրկեց Տիկին Տըֆրինի եւ աբամանդազարդ սաթէ ծանրագին ծխախալտ մը (սիգարէթ) Լորտ Տըֆրինի :

— Կայս. Կառավարութիւնը դարձեալ եօթն բծիչ որոշած է առողջապահական միջազգային խորհրդոյ նիստերուն ներկայ գտնուելու համար :

— Տրապիզոնէն կը գրեն թէ այս տարի ի Թուրքիա եւ մանաւանդ Ասիոյ կողմերը երկրադործութիւնն արդիւնաւոր է , եւ թէ Կարնոյ եւ Բաբերդի կողմերէն բազում արմաղիք ու ալիւր կը փոխադրուին ի Տրապիզոն եւ գներն կարի յոյժ անկեալ են :

— Օսմ. Կայսերական պանդային կողմէ 2000 ոսկի զրկուեցաւ Փոլերանոցը , մանր դրամ կոխելու համար :

— Նոր Օրլէանի , Անվէրսի և Բէնդայի մէջ բացուելիք Արուեստահանդէսներուն համար վաճառք և այլն զրկելու զողները կը հրաւիրուին առեւտրական պաշտօնատուներն մինչեւ ներկայ ամսոյս վերջը , պէտք եղած ծանօթութիւններն ստանալու համար : Շահ կամ վնաս զրկողին պիտի վերաբերի :

— Եւրոպի կայսերական պարտիզին մէջ Գիտարան մը կը հաստատուի Վեհ. Սուլթանին հրամանաւ : Գործիքներն յանձնարարուած են Եւրոպիոյ գործարանաց և կը հասնին ի մօտոյ : Այս գիտարան իւր նմանեաց

մէջ կատարելագործեալ չէնք մը պիտի լինի և պիտի կրնայ հաւատարիլ Եւրոպիոյ ամենէն հռչակաւոր դիտարանաց :

— Ծովային նախարարութիւնն որոշեր է հրէիջաց վաշտ մը կազմել եւ ապսպրեր է պէտք եղած ջրհաններն և այլ գործիքները :

— Օսմանեան կայսերական Պանքան 28 հազար ոսկւոյ փոխառութիւն մ'ըրաւ կայսերական կառավարութեան, Եթմէն և Ալպանիա զրկուելիք զօրաց և ռազմավերաց ծախուց համար :

— Քէրէստէճեան Պետրոս էֆէնտի՝ որ Օսմանեան արժէթղթոց փոխանակման գործողութեան համար կայսերական կառավարութեան կողմէ Լոնտոնի պատուիրակ կարգըռած էր, երեքշաբթի իւր պաշտօնատեղին ուղեւորեցաւ : Օսմանեան Պանքան եւս իւր պաշտօնատարներէն երկուքը՝ զրկեց, մին՝ ի Բարիզ և միւսն ի Լոնտոն :

— Բարձրագոյն հրամանաւ նախ միամեայ, և ապա հնգամեայ դադարման դատաւարտեցաւ Մօնիթէօն լրագիրն որ Տէրգօսի գործաւորաց մէջ պատահած հիւանդութեան քանի մը դէպքերը չափազանցելով, այնպէս մը ցոյց տուած էր թէ վտանգաւոր հիւանդութիւն մը ճարակած է այն կողմեր : Կայսերական բժշկական վարժարանի կողմէ յատկապէս զրկուած բժիշկներ ստուգեցին արդէն թէ ո՛ր է տարափոխիկ հիւանդութիւն չկայ :

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Հալասի անցեալ շաբթուան հեռագիրը պարզուեցաւ վերջապէս : Ռուսիոյ Կայսեր որոշումը կը վերաբերէր Էջմիածնայ կաթողիկոսական ընտրութեան, զոր ջնջած է և այս որոշում հաղորդուած է Բեդրասպուրիի թերթերուն օգոստ . 27 ի հետեւեալ պաշտօնական յայտարարութեամբ :

« Ներկայ տարւոյ Մայիսի 8ին և 9ին Էջմիածնում տեղի ունեցաւ արժանայիշատակ Գէորգ Զորբորդի մահից յետոյ կաթողիկոսական թափուր մնացած դահի կաթողիկոսացուի ընտրութիւնը .

Յիշեալ ընտրութեանը մասնակցում էին՝ Ս . Սինդի անդամները, տեղական Միաբանութեան ներկայացուցիչները և Էջմիածին եկած Ռուսիայի, Պարսկաստանի եւ

Հնդկաստանի թեմերից աշխարհական և հոգեւորական պատգամաւորները . Տաճկահայերի մի քանի թեմերը Սինդիին դրաւոր յայտնած էին իրանց ընտրած կաթողիկոսացուն (կանտիդադ) :

Կառավարութիւնը իւր կողմից բաւականացաւ միայն վերահասու լինել ժողովի գործողութիւններին : Ընտրութեան նիստը բացուելուն պէս, որը բաղկացած էր 52 հոգուոյ, կանոնադրութեան համաձայն ձեռնամուկ եղան 4 հոգու քուէարկութեան, որոնցից երկուքը պէտք է ընտրուէին կաթողիկոսացուներ : Ներկայ գտնուողների ձայնով ընտրուեցան՝ Պոլսոյ Պատրիարք Ս . Ներսէսը, նախկին Պատրիարք Ս . Խրիմեան, Զմիւռնիոյ առաջնորդ Մելքիսեդէկ եպս . Մուրատեան և Երուսաղէմի Պատրիարք Ս . Եսայի :

Ձայների մեծամասնութեամբ, երկու կաթողիկոսացուների՝ Պոլսոյ Պատրիարք Ս . Ներսէսի և Մելքիսեդէկ եպիսկոպոսի ընտրութիւնից յետոյ, ժողովը որոշեց այս ընտրութեան հետեւանքը կանոնադրութեան համաձայն Նորին կայսերական Մեծութեան բարեհաճութեան ներկայացնել :

Բայց յիշեալ ընտրութեանը, ընտրողական ժողովի կողմից անտես է առնուել մի քանի կէտերուն դրժումն (օրինազանցութիւն) գործադիր օրէնքի դէմ . ահաւասիկ .

1. Մինչդեռ Էջմիածնական միաբանութեան սոսկ աւագագոյն վարդապետները առաւելապէս իրաւունք ունէին մասնակցելու ընտրութեանը, հակառակ Կանոնադրքի Ա . 919 Յօդ . այդ իրաւունքով օգտուել են միաբանութեան մի այլ երկու կրտսեր վարդապետները և մի ուրիշն էլ այլ թեմից :

2. Ընտրութեանը մասնակցած է իսպահանու և Հնդկաստանի թեմի փոքրամասնութեան կողմից ընտրուած պատգամաւորը, մինչդեռ մերժուած է եղել ընտրութեանը մեծամասնութեան ներկայացուցիչը :

3. Ընտրողական ժողովը ձայները հաւաքելուց ուշադրութիւն չէ դարձրել վանայ թեմից ստացած գրութիւնների վրայ նըրանց ցանկացած կաթողիկոսացուների մասին, հակառակ գործադիր կանոնադրութեան :

Բացի տեղի ունեցած այս օրինազանցութիւններից, ընտրութեան հետեւանքը գլխաւորապէս չէ համապատասխանում օրե-

ՀԱՏԱՐԱՆԱԳԻՐԻ
ՄԻԱՅՆԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՅ ՀԱՅՈՑ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ե Ի

ԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Հանրային Բարձրագույն Ինժեներական

և Վարժարաններ

Այլ պարունակ է 50 ի չափ մեծ ու փոքր
պատկերներ :

Գին 5 դահեկան տրծաթ

Շատ գնողներու համար մասնաւոր
զեղչ կը լինի :

Կը գտնուի բոլոր գրավածառաց
քով : Կեդրոնատեղին է Հայոց Միացեալ
Ընկերութեանց գրասենեակն , Կա-
լաթա , Կէօյէ Օղլու խան , թիւ 12 :

Հայոց Միացեալ Ընկերութեանց
կնիքը չկրող օրինակներն անվաւեր են :

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆ

ԳԻՇԵՐՈԹԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ

Այս Կրթարանն հաստատուած է
1876 Յուլիս 1 ին և , իբրեւ երկրորդա-
կան (պրիմար) վարժարան , վաւերացեալ
է Հասարակաց Կրթութեան Պաշ-
տօնէութենէն :

Երկրորդական վարժարանի մէջ ա-
ւանդելի բոլոր ուսմունք և Հայերէն ,
Թուրքերէն , Գաղիերէն , Անգղիերէն ,
և Յունարէն լեզուք կ'աւանդուին աստ
ի ձեռն ուսուցչական ը' տիր մարմնոյ մի :

Այս կրթական հաստատութեան
մէջ տարուած առողջական և բարոյա-
կան խնամքն հաւասար է ուսումնական
խնամոցն , որ արդէն ծանօթ է հայ
հասարակութեան : Սնունդն յոյժ գո-
հացուցիչ :

Կրթարանիս Թ. տարեշրջանն պի-
տի սկսի յառաջիկայ օգոստոս 27 եր-
կուշարթի օրէն . ուսանողաց վերամու-
տըն՝ օգոստոս 23 հինգշարթի օրէն :

Նոր աշակերտ տալու փափաքող
ծնողք և այլ այցելուք կարեն տեսակ-
ցիլ ճնօրէնին հետ , օգոստոս 15 չո-

րեքշարթի օրէն սկսեալ , ամեն դէ ուր
և կիրակի օրերն , մինչև կէս օր :

Հիմնադիր-տնօրէն
Յ. ԳՈՒ ԳՅՆ

8 օգոստոս 1884

յՕրթաքէօյ

Ա Ձ Դ

Օսմանեան Ընդհանուր Պարտուց
Թողեալ Հասութից Վարչութիւնը պարտ
անձին կը համարի հասարակութեան
յիշեցնել Դրոշմի օրինաց տրամադրու-
թիւններն և գլխաւորաբար այդ օրի-
նաց 28 և 33րդ յօդուածներն :

Յօդուած 28. — Փոխանակադրերն և
ուրիշ փոխանակելի կամ վաճառելի
թղթերը , որք դրոշմուած չեն կամ
չարժուին դրոշմ չեն կրեր , չեն կրնար
Օսմ. Առևտրական օրինադրոց 76 և 77
յօդուածներով հաստատեալ երաշխա-
ւորութիւնը վայելել : Փոխանցողք (տե-
րաւոր) որ և է երաշխաւորութենէ պի-
տի ազատին և փոխանակադրոյն տէրը ,
փոխանակադրոյն ոչ-ընդունելութեան
պարագային մէջ , միայն քաշողին դէմ
իրաւունք պիտի ունենայ դատ բանալու ,
իսկ ընդունելութեան պարագային մէջ
միայն ընդունողին և քաշողին դէմ ,
եթէ այս վերջինը չհաստատէ թէ փո-
խանակադրոյն վճարման թուականին
փոխարէնը իւր քով կար :

Յօդուած 33. — Դրոշմի գործողու-
թիւնը մասնաւոր Վարչութեան յանձ-
նուած են : Ընդհանուր դատախազը
պաշտօն ունին օրինադանցները գըտ-
նել և դատել Թուրքիոյ դատարա-
նաց առջև , ի գործադրութիւն եզոզ
օրինաց և կանոնադրութեանց սահ-
մանին մէջ :

Թաղապետութիւնք եւ ոստիկանու-
թիւնն իրենց աջակցութիւնը պիտի նը-
ւիրեն Վարչութեան ի գործադրութիւն
դրոշմի վրայ դրուած այս օրինաց :

Կ. Պօլիս օգոստ. 28/9 սեպտ. 1884